



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3036

Հանդիպումների
խորհուրդին
գրայ

ամենամյա զարգացման
պատկերներ

265

Հ-18

Կ. Պոլիս

1857

2010

2001

ՀԱՅ ՈՐԴՈՒԹԵԼՆ

ՎՐԱՅ

ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

ՎԱՐԴԱԳԵՏՈՒԹԻՒՆԸ

265

7-18


265
Z-18

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ՎՐԱՅ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԳՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1857

28

УК



37411-67

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

() Իսական եկեղեցիները եօթը խորհուրդ հաստա-
տած են . աւետարանական եկեղեցին երկուքը միայն
կ'ընդունի որ է Մկրտութիւնն ու Տէրունական Ընթ-
րիքը . միւս հինգը կը մերժէ Աստուծոյ խօսքէն հեղի-
նակութիւն չունենալուն համար : Դաւ կը տարբերի ան
եկեղեցիներէն աս երկու խորհուրդներուն գործածու-
թեանը և անոնց տրուած նշանակութեանը նկատմամբ :
Աս տեսրակին նպատակն է բացատրել պարզապէս Տէ-
րունական Ընթրիքին խորհուրդը ըստ Սուրբ Գրոց :

Գիտաւորութիւննիս աս նիւթիս վրայ վէճի մանեւ
չէ , այլ պարզապէս անանկ բացատրութիւններ դնել
ճշմարտախնդիր մարդոց առջևը , որոնցմէ օգնութիւն
մը ըլլայ իրենց՝ աս խորհուրդը շատակ հասկընալու և
անկէ հոգևոր օգուտ քաղելու : Ուստի աս մտքով կը
ցուցնենք հոս նախ՝ հաղորդութեան նպատակը , ու
իւր նպատակին հասնելու համար ունեցած յարմարու-
թիւնը . երկրորդ՝ հաղորդութեան խորհուրդին օգուտ-
ները . և երրորդ՝ մատակարարութիւնը :

Զատ տեսրակի մը մէջ պիտի քննենք Գոյափո-
խութեան վարդապետութիւնը որն որ շատերը աս խոր-
հուրդին տեղը կ'ընդունին , և պիտի ցուցնենք թէ
ասիկայ մէկ աղէկ հիմ մը չունի Սուրբ Գրոց՝ բա-
նականութեան և պատմութեան մէջ :

Գ Լ ՈՒ Խ Ե

Յ Օ Դ ՈՒ Ե Ն Ե

Հաղորդումն խորհուրդին նպատակը :

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ Ընթրիքին նպատակը հաս-
կընալու համար շատ աշխատանք պէտք չլը-
լար, թէ որ կարգանք անոր սահմանուե-
լուն և առաջին անգամ ֆրիստոսի ձեռո-
քը կատարուելուն պատմութիւնները՝ Աւե-
տարաններէն, ու նաև Պօղոս առաքելոյն
աս նիւթիս վրայ ըրած խօսքերը՝ Կորնթաւ
ցւոց թուղթէն :

Նախ՝ Մատթ. Ի.Ձ. 26—29 : “Եւ քանի
որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ՝
օրհնեց ու կտրեց, և տուաւ աշակերտ-
ներուն՝ ու ըսաւ . Առէք՝ կերէք, աս է իմ
մարմինս : Եւ գաւաթը առաւ՝ գոհացաւ,
ու տուաւ անոնց՝ և ըսաւ . Ամէնքդ ալ
խմեցէք ասկէ . ինչու որ ասիկայ է իմ ար-
իւնս նոր ուխտի, որ շատերու համար կը
թափուի մեղաց թողութեան համար : Բայց

կըսեմ ձեզի . ասկէ ետե որթին բերբէն
բնաւ պիտի չլսեմ մինչև ան օրը՝ երբոր
ձեր հետը անիկայ նոր խմեմ իմ Հօրս
Թագաւորութեանը մէջ» :

Երբորդ՝ Մարի . ԺԴ . 22—25 : “Եւ
բանի որ անոնք կ'ուտէին , Յիսուս հաց աւ
ուա՛ որհնեց ու կտրեց , և տուաւ անոնց՝
ու ըսաւ . Աւէր , աս է իմ մարմինս : Եւ
գաւաթը առաւ՝ գոհացաւ , ու տուաւ ա
նոնց . և ամէնքն ալ խմեցին անկէ : Ու
ըսաւ անոնց . ասիկայ է իմ արիւնս նոր ուխ
տի , որ շատերու համար կը թափուի : Ճըշ
մարիտ կըսեմ ձեզի . ասկէ ետե որթին
բերբէն բնաւ պիտի չլսեմ մինչև ան օրը
երբոր անիկայ նոր խմեմ Աստուծոյ Թա
գաւորութեանը մէջ» :

Երբորդ՝ Ղուկ . ԻԲ . 19 , 20 : “Եւ հաց
առաւ՝ գոհացաւ , կտրեց և տուաւ անոնց՝
ու ըսաւ . Աս է իմ մարմինս , որ ձեզի
համար տրուած է . ասիկայ ըրէք զիս յի
շերու համար : Նոյնպէս ալ գաւաթը առաւ
ընթրիբէն ետե՛ ու ըսաւ . Աս գաւաթը
նոր ուխտ է իմ արիւնովս , որ ձեզի հա
մար կը թափուի» :

Չորրորդ՝ Մ. Կորնթ . ԺԵ . 23—29 : “Ին
չու որ ես Տէրոջմէն ընդունեցի ան որ ձե
զի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատ
նուած զիշերը հաց առաւ . եւ գոհանա
լով՝ կտրեց ու ըսաւ . Աւէր՝ ու կերէ՛ք .
աս է իմ մարմինս՝ որ ձեզի համար կը կրտ
րուի . ասիկայ ըրէք զիս յիշերու համար :
Նոյնպէս ալ գաւաթը ընթրիբէն ետե աւ

զաւ ու ըսաւ . Աս դաւաթը նոր ուխտ է
 իմ արիւնոյս . ասիկայ ըրէ՛ք քանի անգամ որ
 խմելու ըլլաք՝ զիս յիշելու համար : Այսն զի
 քանի անգամ որ աս հացը ուտէ՛ք, ու աս դաւա-
 թը խմէ՛ք, Տերօջը մահը կը պատմէ՛ք, մինչև որ
 ինքը գայ : Աստի ո՛վ որ աս հացը ուտէ՛
 կամ Տերօջը դաւաթը խմէ անարժանաբար,
 պարտական պիտի ըլլայ Տերօջը մարմնոյն
 և արեանը : Արեմն թող մարդ իր անձը
 փորձէ՛, ու այսպէս ան հացէն ուտէ, և
 ան դաւաթէն խմէ : Այսն զի ան որ ա-
 նարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իր ան-
 ձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խը-
 մէ . ինչու որ Տերօջը մարմինը չորոշէր . » :

1 . Աստարեւապէս յայտնի է աս համար-
 ներէն թէ հազորդութեան առաջին զխա-
 ւոր նպատակը զՔրիստոս յիշատակել է,
 յիշել՝ թէ ան է Տեղի յաւիտեանիս կեանս
 ու իրիւթեան փառքը՝ իր չարչարանքերով ու
 մահաւասիւն : Յիշատակելու ենք իր չարչարանք-
 ներն ու մահը՝ ո՛չ թէ առանձին անկախ
 ճշմարտութեանց պէս, այլ գիտնալով որ
 շատ մօտ առնչութիւն մը ունին մեզի :
 « Աս է իմ մարմինս, որ Յեղի համար կը
 տրուի, Յեղի համար կը կորուսի » : « Աս է իմ
 արիւնս, որ Յեղի համար կը թափուի, որ շա-
 տերու համար կը թափուի՝ մեղաց թողու-
 թեան համար » : « Ասիկայ ըրէ՛ք զիս յիշ-
 լու համար » : Աս է աս աս խորհուրդին
 առաջին մեծ նպատակը : Քանի անգամ որ
 կատարենք աս սահմանադրութիւնը, միտ

Քերնիս բերելու ենք՝ թէ Տէրոջը մահն էր միայն, որով կարողացանք յաւիտենա- կան կեանք գտնել: Յիշատակելու ենք զինքը իբրև «կենաց հայր» մեզի կորսուած նեւուս:

Իսկ արդ՝ մեր Տէրը ինք իր բերնովը աս իր սահմանած խորհուրդին նպատակը ասանկ բացայայտ կերպով մը ցուցնելէն ետև, ալ միթէ ամբարշտական յանդգնութիւն չէ անոր նպատակը փոխել և ուրիշ դիտա- ւորութիւնով մը զանիկայ կատարելը: Քրիստոսի հրամանը աս է, որ շէնք յիշե- կածար կատարենք աս խորհուրդը. ուստի թէ որ ասկէ տարբեր նպատակաւ մը ընենք, իրեն դէմ ապստամբութիւն ըրած կ'ըլլանք. ասանկով հաղորդութենէն հոգևոր օգուտ չահելուս տեղը, հոգևոր մահ կը շահինք:

Այ խորհուրդովն յիշատակուելու ան մեծ բանը, որ է մեղաւորաց փրկութեանը հա մար Քրիստոսի քաշած շարչարանքներն ու մահը, քրիստոնէութեան բուն հիմն է: Այ կերպով եղած քաւութիւնովն է միայն, որով Աստուած կը կարողանայ արդար մնալ, և միանգամայն արդարացունել Քրիստոսի հաւատացող մեղաւորները: «Քրիստոս մեղ ծախու առաւ որէնքին անէծքէն՝ ինքը մե ղի համար անէծք ըլլալով»: Գ. աղ. Գ. 13: «Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ գիւրքերուն ըսածին համեմատ», : Ե. կրնի. Ժ. Ժ. 3: «Որ ան կամքովը մենք ալ սրբ- բուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ

անգամ՝ սլատարագուելովը» : ԵՔԻ . Ժ . 10 :
 «Եւ անիկայ մեր մեղքերուն , քաւութիւն
 է , և չէ՛ թէ մինակ մերիններուն , հասլա
 բոլոր աշխարհին ալ » : Ե . Յովն . Ի . 2 :
 « Որ մեր մեղքերը իր մարմինովը խաչա
 փայտին վրայ վերցուց . որ մենք մեղքե
 րէն ազատինք , ու արդարութեան համար
 ապրինք » : Ե . Պէտ . Ի . 24 : « Որ զանի
 կայ առաջուց սահմանեց Աստուած՝ հաւատ
 քով քաւութիւն ըլլալ անոր արիւնովը . . .
 առաջուց գործուած մեղքերուն թողու
 թիւն տալովը՝ իր արդարութիւնը ցուցնե
 լու համար » : Հովն . Գ . 25 : « Ո՛չ ալ
 նոխազներու ու զուարակներու արիւնով ,
 հասլա իր արիւնովը , մէկ անգամ մը սրբա
 րանը մտաւ՝ յաւիտենական փրկութիւն ըս
 տանալով : ԵՔԻ . Թ . 12 :

Արդ՝ յայտնի է թէ շատ հարկաւոր
 բան է որ Քրիստոսի հետեւողներուն ամե
 նուն մտքին ու սրտին մէջ ազէկ մը տը
 պաւորուի աս հիմնական ճշմարտութիւնը՝
 թէ մեղաւորաց փրկութիւնը անոր քաւա
 րար չարչարանքներովն ու մահուամբը կ'ըլ
 լայ միայն : Քրիստոնէութեան ուժն ու մաք
 րութիւնը աս ճշմարտութեանը շիտակ հաս
 կրցուելուն և ընդունուելուն վրայ կը կայա
 նայ գլխաւորապէս : Ասոր համար մեր օրհ
 նեալ Փրկիչը հաստատեց աս հաղորդու
 թեան խորհուրդը , որ աս մեծ ճշմարտու
 թիւնը յիշատակենք , և ասանկով իրեն
 հետեւողներուն ամենուն սիրտը իրեն հե
 տը միանայ՝ իբրև իրենց միակ Փրկիչը ըն
 դունելով զինքը :

2. Տերունական ընթրիքը աս իր մեծ և գլխաւոր վախճանին հետ մէկտեղ անբաժանելի կերպով մը կցուած ուրիշ մէկ նպատակ մըն ալ ունի . որ է Քրիստոսի աշակերտացը մէջ հո-ւեան հոգի իջ ււալ : Ասիկայ բնականապէս կը հետևի . քանզի աշակերտները մէկտեղ դալով և իրենց մէկհատիկ Տերոջը յիշատակութիւնն ընելով , որ անոր արիւնտովը ամէնն ալ նոյնօրինակ փրկուեցան մեղքերնուն , մէջերնին հաստատուն միութիւն մը կը ծագի և կ'աճի : « Ինչու որ մենք շատերնիս մէկ հաց՝ մէկ մարմին ենք » կ'ըսէ Առաքեալը , « վասն զի ամէնքս ալ ան մէկ հացէն կը վայելենք » : Ե. Կորնթ. Ժ . 17 : Ամէն մարդ կ'ընդունի որ հոս Առաքեալը աս ըսել չուզեր թէ ամէնս ալ նկարագրական հաց կը դառնանք՝ և կամ իրար խառնուելով մէկ մարմին մը կ'ըլլանք , հապա Քրիստոսի հետ միանալով՝ որ հաւասարապէս ամենուս ալ Տերն է՝ մէկզմէկու հետ ալ միացած կ'ըլլանք , և ասանկով հազորդութիւնը Քրիստոսի և անոր աշակերտացը հետ ունեցած միութիւններնուս մէկ տեսանելի նշանակը կ'ըլլայ : Հին Հայրապետաց սովորական եղած խորհրդածութիւններէն մէկն է աս , թէ ինչպէս որ շատ մը ցորենի հատեր ալուր ըլլալով ու մէկ տեղ դալով՝ հաց կ'ըլլան , և ինչպէս որ շատ մը խաղողի հատեր կոխուելով ու

քուրս տուած ջուրերնին մէկտեղ գալով՝
 գինի կ'ըլլան, անոր պէս ալ Քրիստոսի
 ճշմարիտ աշակերտները մի և նոյն Տէրօջ
 հետ միացած ըլլալովնին մէկզմէկու հետ
 ալ խիստ մեծ սիրով կապուած կ'ըլլան :
 Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս փափաքելով
 կը փափաքէր որ աս միութիւնը բոլոր իրեն
 հետևողները ունենան : Աս խորհուրդը հաս-
 տատելէն անմիջապէս ետքը իր աշակերտ-
 ներուն հետ ըրած վերջին աղօթքին մէջ
 կրկին և կրկին կ'աղաչէ՝ որ ինչպէս որ Ինք
 Հօր Աստուծոյ հետ մէկ է, անանկ ալ
 բոլոր իր աշակերտները մէկ ըլլան իրմով :
 Աս է աղաչածը որ արտաքին կազմութիւ-
 նով ու կանոններով մէկ ըլլան, և սրտեր-
 նին անմիաբանութիւնով՝ փառասիրութիւ-
 նով և ատելութիւնով լեցուն ըլլայ : Կա-
 տարեալ արտաքին միութեան փափաքիլը
 կամ յուսար բոլորովին պարսպ բան է .
 քանզի աս միութիւնը բանտերով՝ շղթա-
 ներով՝ աքտորով և սուրով միայն կ'ըլլայ,
 ինչպէս որ պատմութեանց մէջ շատ տեղ
 կը գտնենք, և ան ալ անկատար : Քրիստո-
 սի փափաքած միութիւնը հոգևոր միութիւն
 է . միութիւն եղբայրական սիրով . ասկէ
 ալ կ'իմանանք թէ ինչ բան որ անոր ե-
 կեղեցիին մէջ եղած աս միութեանը հա-
 կառակ կու գայ, անոր կամքին դէմ ըլլալու
 է : Աս մէկզմէկ սիրելու և մէկզմէկու օգու-
 տին համար աշխատելու միութիւնը իր ե-
 կեղեցիին մէջ հաստատելու համար՝ պարտք
 դրաւ իր աշակերտացը վրայ որ աս Աստուա-

Ճային սահմանադրութիւնը կատարեն, որով և իր ան անհուն սէրը՝ որ մինչև ցըմահ դիմացաւ, տեսանելի կերպով մը կը ցուցուի և կը յիշատակուի: Ուրեմն հրապարտութիւնով՝ փառասիրութիւնով՝ ատելութիւնով և ուրիշ դեռ չյադթուած չար կիրքերով երթալ Քրիստոսի խորհրդական մարմինն ու արիւնը ճաշակելէն աւելի մեծ ամբարշտութիւն կ'ըլլայ: Քանզի ասոնք Քրիստոսի մարմինը բաժանող ու ապականող կիրքեր են:

3. Հաղորդութեան առաջին նպատակին Տէտ կից կապակցութիւն ունեցող մէկ երրորդ նպատակ մըն ալ յայտնապէս կը ցուցնէ Տէրն մեր, ըսելով՝ «Սակէ ետև որ թին բերքէն բնաւ պիտի չսմեմ, մինչև ան օրը՝ երբոր յեր կերը անիկայ նոր խմեմ էմ Հօրս Լափա-որո-ւեանը մէջ»: Աս խօսքով կը ցուցնէ թէ Հաղորդութեան խորհուրդը կատարելով ոչ միայն իր չարչարանքներն ու մահը յիշելու են, այլ նաև եր չարչարանքներով ու հակա-ամբը փանուելու յաւիտենական փառքն ու ցնծութիւնը: Ինքն ալ իր դառնակսկիծ չարչարանքները քաշած ատենը՝ ուշի մտօք ան գալու յաւիտենական ցնծութեանը կը նայէր. ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ, «Ինքը (Քրիստոս) ան ուրախութեանը համար՝ որ իր առջեր կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց»: Նէր. ԺԲ. 2: Կ'ուզէ որ

աշակերտը իր վարդապետին պէս ըլայ : Ար
 փափաքի որ բոլոր իր ետեւէն զացողները
 իր եղած տեղը ըլլան՝ որ իր փառքը տես-
 նեն : Խոստացաւ որ եթէ իրեն հետ չար-
 չարուին , իր հետը պիտի թագաւորեն ալ :
 Ուստի չէնք կրնար յիշել Քրիստոսի մին-
 չև ցմահ քաշած չարչարանքներն ու ցու-
 ցուցած խոնարհութիւնն ու հնազանդու-
 թիւնը , առանց նաև միտք բերելու անոր
 փառաւոր յաղթութիւնը , և անոր յաւիտե-
 նական ու ընդհանրական թագաւորութիւ-
 նը , որով ըստ ամենայնի կը տիրէ իր ե-
 կեղեցիին վրայ : Աս միտքով՝ Քրիստոսի
 չարչարանացը և մահուանը յիշատակութիւ-
 նը՝ իր աշակերտացը իրեն հետ վայելելու
 ան յաւիտենական փառքին և երջանկու-
 թեանը գրաւը կը սեպուի :

Ըս ծանօթութիւններէն յայտնի է որ
 եթէ մէկը հերունական ընթրիքին ինչ
 նպատակ ունենալը հարցնելու ըլլայ մեզի ,
 պատասխաննիս աս է , թէ Քրիստոսի և
 առաքելոց սորվեցուցածին նայելով՝ հաղոր-
 դութեան խորհուրդը սահմանուած է՝ մեր
 փրկչին՝ մեղաւորաց փրկութեանը համար
 քաշած չարչարանքներն ու ճաշակած մահը
 յիշատակելու համար , ու նաև բոլոր անոր
 հետևողներուն միութեան՝ համակրութեան
 ու սիրոյ կապ ու յաւիտենական երջան-
 կութեան գրաւ ըլլալու համար :

Հասարակական խորհուրդին՝ իր նպաստակէն հաս-
նելու համար ունեցած յարմարութիւնը :

ՄԵՐ Տէրօջը Աստուածային իմաստու-
թեանը սքանչելի հանգամանացը մէկն ալ
աս էր, որ ինչ որ ընէր ամենէն յարմար
ատենը կ'ընտրէր, և միշտ ամենէն պատ-
շաճ կերպովն ու ամենէն աղէկ միջոցովը
կ'ընէր : Հարսնիքին մէջ չուանէ խարազան
չգործածեց, և իր Հօրը տունը գողերու
այր դարձունող լուծայափոխներուն ու ա-
ղանեւաձառներուն համար ալ ջուրը գի-
նիի չգարձուց : Երբէք հին գինին նոր տի-
կի մէջ ու նոր գինին հին տիկի մէջ
չդրաւ : Բոլոր իր գործքերը կատարեալ են .
անանկ որ ամենուն մէջ ալ իր Աստուա-
ծային բնութիւնը կը փայլի : Եւ իր աս
իմաստութիւնովն էր՝ որ աս հազորդութեան
սահմանադրութիւնը իր սանդխտութեանը
ետքի օրերը ձգեց : Զանիկայ հաստատու-
լու համար ընտրած ժամանակը ամենէն յար-
մար և ամենէն ազդու տարին էր : Ան ատե-
նը՝ որ ալ իր աշակերտներէն սխտի զատ-

ուէր , և անոնցմէ մէկը զինքը պիտի մատ-
նէր , և միւսը պիտի ուրանար . և ամէնն
ալ պիտի թողէին զինքը . ան ատենը՝ երբ
աշխարհիս մեղացը ահարկու անէծքը պիտի
կրէր , և Գեթսեմանի պարտէզին մէջ ան
ծանր նեղութիւններն ու դառն տառապանք-
ները պիտի քաշէր , և խաչին վրայ ալ
Հօրը երեսէն պիտի կցնար . ան ատենը՝
երբ սատանաներն ու չար մարդիկ իր վը-
րայ յաղթութեան ցնծութիւն պիտի կա-
տարէին . ան ատենն էր ահա , որ իր բո-
ւրտիքը ժողովեց իր սիրելի աշակերտները ,
և աս ընթրիքը սահմանեց : Ասոր հետ
մէկտեղ խնդիրք մըն ալ ըրաւ . “ Ասիկա
ըրէք զիս յիշելու համար ” : Մեռնող բա-
րեկամի մը խնդիրքն է աս , և զինքը ի-
րենց բարեկամ և Փրկիչ ընդունողներուն
ամէնն ալ կատարելու են զանիկա մինչև
աշխարհիս վերջը : Հաղորդութեան խորհուր-
դին աս պարագաները շատ սուրբ և քաղցր
զգացումներ կը զարթուցանեն Քրիստոսի ա-
շակերտացը սրտին մէջ :

Ըսկէ զատ աս խորհուրդիս համար ամէնէն
յարմար նշանակներն ընտրեց , և զանիկա կա-
տարելու համար ամէնէն պարզաձ ճամբան :

1 . Ըս նշանակներուն ունեցած յարմա-
րութիւնը կ'երևի աս բանին մէջ , որ ա-
նանկ յատկութիւններ ունին՝ որ մտքեր-
նուս առջին կը դնեն ան բարոյական ճիշ-
մարտութիւնները , որոնք նշանակուած կամ

յիշատակուած բանին հետ սերտ կապակցութիւն մը ունին : Յիշատակուելու ճիշմարտութիւնն աս է՝ թէ Քրիստոս իր չարչարանքներովն ու մահուամբը յաւիտենական կեանք և փրկութիւն տուաւ մեզի :

Ըս բանը ցուցնելու և յիշատակելու համար հացէն և գինիէն յարմար բան չըկայ . բեկեալ հացը իր բեկեալ մարմնոյն նշանակ է . գինին ալ մեզի համար թափած արեանը նշանակ : Ինչպէս որ մարմնաւոր կեանքերնիս պահողը հացն է , անանկ ալ հոգևոր կեանքերնիս պահողը Քրիստոս է . ինչպէս որ հացը ստամոքսներնուս մէջն ընդունելով՝ մարմիննիս կը սնանի և կը զօրանայ , անանկ ալ խաչեալ Քրիստոս մեր Տէրը հաւատքով սրտերնուս մէջն ընդունելով՝ հոգինիս կը սնանի և կը զօրանայ : Նմանապէս գինին ալ զօրութիւն կուտայ հիւանդներուն և ուժէ ինկած տկարներուն : Արթն ու անոր պտուղը շատ անգամ կը գործածուին իբրև նշանակ խաղաղութեան ապահովութեան և ուրախութեան : Քրիստոս է ան ճշմարիտ որթը , որուն արիւնը ոչ թէ մարդուս մարմինին համար՝ այլ հոգիին համար թափուեցաւ : Եւ ուլ որ խմէ անկէ , այսինքն զՔրիստոս մեզի համար արիւն թափած ընդունի հաւատքով , յաւիտեան կ'ապրի : Ամէն մարդ յայտնի կը տեսնէ՝ որ աս նշանակներուն մէջ մէկ բնական յարմարութիւն մը կայ աս ճշմարտութիւնները ցուցնելու և ազէկ մը սրտերնուս մէջ տպաւորելու :

Ճշմարիտ է թէ մարդ կարող չէ կատարելապէս ըմբռնել փրկագործութեան վերաբերեալ ճշմարտութիւնները : Ասանակ բան մըն է, որ հրեշտակներն ալ իմանալու կը փափաքին : Ե. Պէ. . Ե. . 12 : Սակայն մեղաւոր՝ և փրկիչի մը կարօտ ըլլալնիս, Աստուծոյ սուրբ օրէնքովը դատապարտուած և միջնորդի մը ու ազատիչի մը կարօտ ըլլալնիս զգալու համար՝ ոչ իմաստութիւն պէտք է և ոչ զիտութիւն : Եւ այսչափը հասկընալու կարող եղողը՝ հաղորդութեան խորհուրդին մէջ գործածուած հացին ու զինին ինչ նշանակելն ալ կրնայ հասկընալ : Աս երկու նշանակները ամենապարզ և շատ սրտառուչ կերպով մը կը ցուցնեն զղջացեալ հաւատացելոց, թէ իրենց փրկութիւնը չարչարեալ Փրկիչի մը ձեռքէն է՝ որ իր անձովը կրեց իրենց մեղքերը խաչափայտին վրայ :

2 . Քրիստոսի սահմանած աս խորհուրդին մէջ սա յարմարութիւնն ալ կը տեսնենք՝ որ մեծ առնչութիւն մը ունի Մովսիսական օրինաց հետ :

Մովսիսական օրինաց ծէսերուն և արարողութիւններուն մէջ միշտ կը գործածուէր աս հացն ու զինին հոգևոր ճշմարտութիւններ ցուցնելու համար : Ալիւրը մինչևանգամ իբրև զօճ մեղաց կը գործածուէր, և ամենասուրբ կը կոչուէր : Ղև. . Ե. . 11 : Գ. . 14—17 : Բաղարջն ալ շատ կը գործած-



49-11543

ուէր հրէական օրինաց այլևայլ արարողութիւններուն և զոհերուն մէջ : Ասկէ օրը երկու անգամ զոհ կը մատուցանէր քահանայատէրը իրեն համար, որ ասիկա մշանջենաւորապէս մատուցանելու զոհ մըն էր . Ղևոս . օ . 20—23 : Ասկէ նաև ազատութեան և գոհութեան զոհ կը մատուցանէին : Սուրբ Գրոց մէջ շատ տեղերէ կ'երևի որ սակառ մը հաց միշտ կը կենար սեղանին քովը օրական զոհերուն հետ մէկ տեղ գործածուելու համար : Եւ . ԻԹ . 32 : Թ . օ . 15 : Իսրայէլացւոց տասներկու ցեղերուն համբանքովը տասներկու հատ բազարջէ շօթ կը կենար միշտ «Տէրօջը առջևը մաքուր սեղանին վրայ», (Եւ . ԻԵ . 30 : Ղևոս . ԻԻ . 5, 6, 7,) որ կը կոչուէր առաջաւորութեան հաց, և իսրայէլացւոց ցեղերուն շարունակ տաճարին մէջ Տէրօջը ծառայելուն նշանակն էր :

Վեանապէս գինին ալ ամէն օր կը գործածուէր տաճարին մէջ իբրև զոհ : Օրական զոհին մէջ գինի կար . (Եւ . ԻԹ . 40.) և կ'երևի թէ բոլոր միւս զոհերուն հետ ալ գինի կը մատուցանէին : Թ . օ . 1—15 :

Օտակական ընթրիքին ալ բազարջ ու գինի կը գործածէին, և եօթը օր ալ բազարջակերաց տօն կը կատարէին . աս եօթը օրուան մէջ իսրայէլացիներէն մէկը չէր կրնար ուրիշ հաց հանդպցունել իր տունը : Ասիկա Եզրիպտոսէն ազատուելուն յիշատակն էր, որ ան ատենը շատ շուտ փախչիլ հարկ ըլլալուն համար՝ ժամանակ

յունեցան խմորեալ հաց շինելու : Եւ . ժ . 39 : Չատհական սօնը ընդնալուն , տանը մեծերը հաց ու զինի կը բաժնէին սեղանը նստողներուն , և գոհութիւն կը մատուցանէին Աստուծոյ՝ երկրիս պատուը մարդոց պարգևելուն համար : Եւ ուստի աս Չատհական սօնին լրանալուն գործածուած զինին կը կոչուէր գաւաթ-օրհնութեան՝ (Ποτήριο της εὐλογίας καὶ εὐχαριστίας) ասոր համար է որ հաղորդութիւնն ալ շատ անգամ Էվխարիստիա (Εὐχαριστία) կը կոչուէր՝ Հրէից գործածած աս խօսքին համեմատ :

Եւ ծանօթութիւններէն յայտնի կ'երևի որ Հրեաները սովորած էին գործածել հացն ու զինին իբրև յիշեցուցիչ նշանք կամ նշանակը հոգևոր բաներու : Աս ալ զիտելու է որ թէպէտ զինին աս կերպով գործածելու հրաման կայ , և հիւադներուն ու տկարներուն տուած օգնութիւնովն ալ գովելի է , սակայն ունակաբար գործածելը ազէկ բան սեպուած չէ Սուրբ Գրոց մէջ : Պատուէր կար քահանաներուն , որ Տէրօջը Խորանը մտած ատեննին զինի չիմեն : Ղև . ժ . 9 : Նոյնպէս և Տէրօջը Մեծ Ուխտ ընողները՝ ուխտերնուն օրերը ամենելին զինի չէին կրնար խմել : Շատ խրատներ ալ կան Սուրբ Գրոց մէջ՝ զինի չխմելու համար : Տէս Առաջ . Ի . 1 : Եսայ . Ի . 11 , 12 : ԻԸ . 7 : Աքեայ . Ի . 5 . հօ : Ուստի կ'երևի թէ զինին գլխաւորապէս կրօնական արարողութեան մէջ կը գործածուէր . և Մովսիսական օրինաց մէջն ալ

անշուշտ Քրիստոսի արեանը նշանակն էր : Ասկէ զիւրաւ կը հասկընանք՝ թէ ինչու համար գինին Աստուծոյ և մարդոց սիրտը կ'ուրախացընէ կ'ըսուի Աստուածաշունչին մէջ : Դաս . Թ . 13 : Ըստ ընգունելի և հաճելի էր Աստուծոյ իր հաւատացեալ ժողովրդոցը ձեռքէն գինի ընգունելը՝ իբրև օրինակ ան արիւնին որ աշխարհիս մեղքերը պիտի սրբէր :

Եւ արդ՝ երբոր մեր Փրկիչն ալ հացն ու գինին ընտրեց և իր պատարագուելու մարմնոյն և արեանը նշանակ զրաւ , մէկ նոր ու տարօրինակ բան մը ըրած չեղաւ , այլ ըստ ամենայնի շրէից սովորութեանը պէս գործեց . քանզի հացն ու գինին իբրև հոգևոր բաներու նշանակ գործածելու սովորութեանը կատարելապէս ծանօթ չեղող հրեայ չէր գտնուէր :

3 . Քրիստոս իբրև փրկագործ յիշատակուելու համար ասանկ ԹՅՆ ԸՆՍԱՀՄԱՆՈՒԷԼԸ շատ յարմար էր իր աշակերտացը սովորութիւններուն և զգացումներուն :

Ընտրուց շրէական օրինաց տակն ըլլալովն՝ սովորած էին աս կերպով հոգևոր և մարմնաւոր օրհնութիւններ յիշատակելու : Կատարած տօներնուն բոլորն ալ Աստուծոյ իրենց մէջը գործած ազատութիւնները յիշատակելու համար էր : Օգտակարան տօներնին աս նպատակաւ սահմանուած էր . ինչպէս որ յայտնի է աս խօս-

քերէն . “Եւ աս բանը քեզի ու քու որդւոցդ կանոն ըլլալու համար պահէք յաւիտեան : Եւ ըլլայ թէ երբոր ան երկիրը գաք՝ որն որ Տէրը ձեզի պիտի տայ իր Եսածին պէս , աս պաշտօնը պահէք : Եւ ըլլայ թէ երբոր ձեր որդիքը ձեզի ըսեն թէ՛ Աս պաշտօնով ի՞նչ ըսել կ'ուզէք . ըսէք որ , Ասիկայ Տէրօջը զատկին զոհն է , որ անիկայ Եզրիպտոսի մէջ Իսրայէլի որդւոցը տուներուն զրայէն անցաւ՝ երբոր Եզրիպտացիները զարկաւ , ու մեր տուները ազատեց ,” : Եւ . ժ . 24—27 : Տէրունահան ընթրիքը բոլոր ջերմեռանդ և բարեմիտ հրեայ քրիստոնէից շատ յարմար եղանակ մը պիտի երևար ան մեծ ազատութիւնը՝ այսինքն յաւիտենական մահուանէ ազատութիւն յիշատակելու , որուն մէկ աղօտ օրինակն էր Եզրիպտոսէն ազատուելնին :

Ահա այսպէս քննելու նայելու ենք աս սահմանադրութեանը շին կտակարանին հետ ունեցած կապակցութիւնները , որ աղէկ մը հասկընանք անոր ուժն ու բուն միտքը , և տեսնենք թէ ինչ պատճառաւ աս եղանակն ու աս նիւթերը ընտրեց Տէրն մեր , և ուրիշ եղանակ ու ուրիշ նիւթեր չընտրեց : Աս քննութիւնը ընելէս ետև՝ ալ յայտնի կը տեսնենք թէ ինչ սնտի և ոչինչ բաներ են անհաւատներուն և մէկ քանի ինքըզինքնին քրիստոնեայ անուանողներուն՝ աս խորհուրդին դէմ՝ բերած ան առարկութիւնը , թէ յարմարութիւն մը չունի մեր հաւատքին ան հիսկ

նական ճշմարտութիւնները յիշեցունելու և զանոնք միաքերնուս և սրտերնուս մէջ տը սլաւորելու :

4 . Թէոր հեթանոսաց կրօնական ըսկզբունքները քննենք , կը տեսնենք որ Տէրունական Ընթրիքը մէկ մասնաւոր յարմարութիւն մը ունի անոնցմէ նոր քրիստոնէութեան դարձողներուն մտացը մէջ ուղիղ գաղափարներ խօթելու քրիստոնէից մոթեանը և ան ճշմարտապէս քաւարար պարագիծն Վրայ , և անոնց հասարակ ան քաւարութեանը Վրայ հասարակելու :

Արը ըսինք որ աս խորհուրդին մէկ նը պատակն ալ “ Քրիստոսի աշակերտացը մէջ միութեան կապ մը ըլլալն ” է : Քրիստոս սահմանեց զանիկա հասարակաց սեղան մը ըլլալու . ինչպէս որ առաքելոց խօսքերէն ալ յայտնի կ'երևի : Հին քրիստոնեաներն ալ ասանկ “ Զէնքից կու գային հաց կորելու ” : Ն. Կորնթ . Ժ.Ն . 20 . 23 : Սուրբ Գրոց մէջ տեղ մը չկայ առանձին հաղորդութիւն ընելու հրաման տուող խօսք մը : Քրիստոնեաները պարտական են ընկերութեամբ մէկտեղ դալով հաղորդութիւն ընել : Արդ՝ բոլոր ազգաց և ամէն դարու մէջ մէկտեղ հացկերոյթ ընելը բարեկամութեան և միութեան սրբազան նշան մը սեպուած է : Եթէոր ասանկ կամաւ և իբրև նշան բարեկամութեան մէկտեղ նստող հաց ուտողներուն մէջէն մէկը իր ընկերներուն դէմ ելլէ , անոր

ըրա՞ծ բանը խիստ ատելի անհաւատարմութիւն կը սեպուի՝ և միշտ անանկ սեպուած է : Մինչևանգամ վայրենի ազգերը մէկտեղ հացկերոյթ ընելը բարեկամութեան և միութեան սրբազան գրաւ մը կը սեպեն . և թէոր անգամ մը մէջերնին հացկերոյթի մը հրաւիրուիս , ալ անկէ ետև կեանքդ ապահով կը մնայ ձեռքերնին : Ուստի երբոր Քրիստոսի աշակերտներն ալ մէկտեղ կը ժողովին իրենց Տերօջը փրկարար սէրը տօնելու՝ անոր մարմնոյն և արեանը նշանակները ուտելով ու խմելով , իրենց միութիւնը ու եղբայրութիւնը յայտնի կ'ըլլայ ամենուն աս գեղեցիկ և խորհրդաւոր գործովս : Ով որ Քրիստոս կ'ընդունի՝ որչափ տգէտ ըլլայ թող ըլլայ , հող չէ ո՛ր ազգէն կամ որ կրօնքէն քրիստոնէութեան դարձած ըլլալը , յայտնի կը տեսնէ աս ընթրիքիս միութիւն և եղբայրական սէր հաստատելու համար ունեցած մեծ յարմարութիւնը : Եւ աս յարմարութիւնը ամէն ազգաց և ամէն դարու մէջ ունի :

Մանապէս մեծ յարմարութիւն ունի ուղիղ գաղափարներ տալու մեղաց համար եղած ան ճշմարիտ քաւչարար սրատարագին վրայ , որն որ Աստուծոյ օրէնքը կը պահանջէր :

Ի՞նչ գաղափարը բոլոր հեթանոսաց ամենահաստատ և սրտերնուն մէջ խորին տըպաւորութիւն գտնող կրօնական գաղափարն եղած է միշտ՝ թէ անհնար բան է որ մէկը Աստուծոյ հետ հաշտութիւն գտնէ՝ առանց արիւն թափուելու և մեղքի զոհ մատու-

ցանելու : Եւ մինչև հիմա մէջերնին սովորու-
 թիւն կայ որ մէկ մեծ գործի մը ձեռք չեն զար-
 ներ թէ խաղաղութեան ատեն ըլլայ թէ պա-
 տերազմի՝ առանց զո՛հ մատուցանելու ժո-
 դովրդոց մեղացը համար , և այսպէս հաշ-
 տութիւն ընելու ան աստուծոյն հետ՝ որ
 կը կարծեն թէ ընելու գործերնուն վրայ
 պահապան պիտի կայնի : շին ատենները
 բոլոր պատերազմէ դադարելու և կամ պա-
 տերազմ ընելու խօսքերը , խաղաղութեան
 դաշինքները , դաշնակցութիւնները և մինչև
 անգամ պայմանազիրները վաւերութիւն չե-
 ին գտներ առանց զո՛հի : Արիւն թափուի-
 լը ամէն տեղ հարկաւոր սեպուած էր
 մարդիկ մէկզմէկու հետ և Աստուծոյ հետ
 միացրնելու համար : Եւ սակայն մէջերնին
 գտնուող փիլիսոփաներն անգամ բոլորովին
 անկարող էին ցուցրնելու աս բանին ուր-
 կէ ելլելը , և կամ մեկնելու թէ ինչու
 համար անմեղ կենդանիները կը զոհեն և
 անբան անասնոց արիւնը կը թափեն աստ-
 ուածներէն շնորհք գտնելու համար : Յայտ-
 նի կը տեսնէին որ զոհուած անասուն մը
 ինքնին արժէք մը չունի Աստուծոյ առջին .
 և ասոր համար շատ անգամ զո՛հ ընելը
 բոլորովին ձգելու կ'ըլլային : Ինչպէս կ'ըսէ
 Սենեքայ (Տէ Պէնէֆիլէնձիա Գրքին մէջ ,
 1 . 6) թէ “ Աստուածներուն պատիւը զո-
 հերուն վրայ չէ , թէև ըլլայ որ շատ պատ-
 ուական և ոսկիով ծածկուած ըլլան . այլ
 երկրպագողին աստուածավախ և արդար
 կամքին վրայ է : Բարի մարդիկ՝ թէև մի-

այն ցորենն ալ զո՛հ ընեն , աստուածասլաշտ են : Սակայն չարերը՝ թէև սեղանները արիւնյուլայ ընեն , չեն կրնար փախչիլ ամբարշտութիւններնուն դատապարտութենէն , :

“Ճիմարներուն զոհերը միայն հրոյ ճարակ են ,” կ'ըսէ Պիւթագորաս , “և նուիրած ընծաներն ալ տաճարներուն կողոպտուելուն պատճառ են : “Միայն ան է ճրջ մարիտ քահանայ , որ ինքըզինքը կը մատուցանէ իբրև զո՛հ , և իր հոգին կը սրբացրնէ Աստուծոյ տաճար ըլլալու . քանզի Աստուած մաքուր հոգիէն աւելի յարմար բնակարան չունի իրեն աշխարհիս մէջ ,” : Պղատոն ալ կ'ըսէ թէ “Աստուածներուն վրայ մաքուր ուղիղ գաղափարներ ունենալը բոլոր զոհերէն և արարողութիւններէն աւելի հաճոյ է անոնց ,” :

Սակայն շատ տեղեր ալ կը տեսնենք որ զո՛հ մատուցանելը յայտնապէս քարոզած ու շատ մեծ գովասանութիւններով գոված են : Հին ատենները՝ ինչպէս հիմա ալ , աւմենէն խելացի հեթանոսներն անգամ աւտեն ատեն երկու ուղղակի մէկզմէկու հակառակ խորհուրդներու մէջ կ'իյնային : Երբեմն շատ կ'ազգէր սրտերնուն՝ մեղքերնէն ազատելու համար զոհի կարօտ ըլլալնին . երբեմն ալ մատուցած զոհերնուն խիստ ուրինչ բաներ ըլլալը անանկ յայտնի կ'երևէր աչքերնուն , որ զո՛հ ընելը բոլորովին ձրգելու կ'ըլլային :

Իայց երբոր Քրիստոս պատարագեալ կը

յայտնուի հեթանոսաց , և մեղաւորաց տեղը իր քաշած չարչարանքներովն ու մահուամբը ըրած քաւութեանը վարդապետութիւնը առջնին կը դրուի , ան ատենը՝ թէ որ աս ճշմարտութիւնը ընդունին ան երկու մէկզմէկու հակառակ խորհուրդներնին կը հաշտուին , իրենք ալ վարանմունքէ կ'ազատին : Ար տեսնեն որ իրենց զոհերը իրացընէ ոչինչ բաներ են եղեր , սակայն աս նոր յայտնուած պատուականագոյն զոհը կարող է իրենց հոգւոյն բոլոր կարօտութիւնները լեցընել : Ար գտնեն անանկ պատարագ մը , որ « մէկ անգամ մը մատուցուած է շատերուն մեղքերը վերցընելու համար » (Եբր . Թ . 28) , և կ'իմանան որ Քրիստոս բոլոր մարդոց համար անգամ մը մարմինով չարչարուելովը սրբուած են անոր հաւատացողները , և թէ իր մատուցած մէկ պատարագովը մշտնջենաւորապէս կատարած է սրբուածները : Եբր . Ժ . 10 . 14 : Ալ հիմա կը հասկընան մեղքինինչ ըլլալը , և իրենց մեղքերէն ազատելու համար ինտոր փրկիչի մը կարօտ ըլլալնին : Արդ՝ աս հեթանոսական խաւարէն և տգիտութենէն դեռ նոր ազատող և փրկութեան փառաւոր յոյս տեսնող նորահաւատներուն առջը՝ Քրիստոսի իրենց հոգիներուն համար կատարած փրկագործութիւնը յիշատակելու համար հացէն ու գինիէն աւելի յարմար ինչ կայ աշխարհիս մէջ : Հացը անոր մարմինն է , գինին ալ արիւնը : Ասոնց երկուքն ալ անանկ հասարակ նիւթեր

էն , որ չեն կրնար մարդոց միտքը խաբել
մոլորցընել և անոնցմէ սնապաշտ յարգութիւն
մը ընդունիլ . և անանկ յայտնի կերպով
մը կը ցուցընեն ան նշանակուած հոգևոր
բաները , որ սխալ բան մը հասկընալն ալ
շատ դժուար բան է : Ար յիշեցունեն մար
դոց ան խաչեալ Քրիստոսը , որ իրենց հո
գիներուն փրկութիւնն է , և զինքը հաւատ
քով սրտերնուն մէջը ընդունելով՝ հոգևոր
կեանք կը ստանան : Ասոնց պարզութիւնը
բոլորովին կը դարձընէ մարդուս միտքը հե
թանոսութեան ան մեծաշուք արարողու
թիւններէն և ան ցուլերուն ու նոխազներուն
արիւնովը լուացուող սեղաններէն դէպի ան
մէկհաստիկ պատարագին , որ բաւական է
բոլոր աշխարհի մեղքերը վեցընելու . որուն
մարմինն ու արիւնը ուտելու հրաւիրուած
են՝ ոչ թէ մարմնաւորապէս , այլ հոգե
ւորապէս . որուն հետ անբաժանելի կերպով
մը միացած են՝ ոչ թէ ստամբքսներնուն
մէջ , այլ հաւատքով սրտերնուն մէջ ընդու
նելով զինքը . և ինչպէս որ աս խորհուրդին
նշանակական նիւթերը մարմինը կը սնուցա
նեն , անանկ ալ ան նշանակուած խաչեալ
Փրկիչը հոգին կը սնուցանէ : Ով որ հազորդու
թիւնը աս կերպով կ'առնէ , կրնայ իմա
նալ Սուրբ Ախարիանոսին զրուցած սա խօս
քերուն ճշմարտութիւնն ու գեղեցկութիւ
նը : « Աս աւանդութեան հեղինակը (Քրիս
տոս) ըսաւ մեզի որ եթէ իր մարմինը չու
տենք և արիւնը չխմենք , կեանք չենք ու
նենար . ասով հոգևոր դաս մը տուաւ մե

զի, և ճամբայ մը բացաւ ան հոգևոր բաշտ
 նը հասկընալու, որ գիտնանք թէ մեր (ան
 հացը) ուտելը իր մէջը մնալ մըն է, և
 (ան դինին) խմելը իրեն հետ խառնուիլ
 մէկ բլլալ մըն է, հնազանդելով իրեն՝
 մեր կամօքը իրեն հետ կապուած և մեր
 սիրովը իրեն հետ միացած: Ուստի անոր մար
 մինը ուտելը անօթութիւն մը կամ փա
 փաք մըն է անոր մէջը մնալու, : Կեդրեա
 նոս, Տերոնահան Ընթրիքին շրջ, Երեւ 469,
 470 :

Յ . Տերոնահան Ընթրիքին մէջ Գործածուած
 նշանակները մասնաւոր յարմարութեան մը ունին
 մարդկային բնութեան սա երկու մոլորական հակա
 միութեանները սանձահարելու . որոնց առաջինն
 սա է : Մարդս սրտով Աստուծմէ օտարա
 ցած ըլլալուն համար՝ բնական հակամիտու
 թիւն մը ունի սխալմամբ հոգևոր բանի մը
 նշանը նշանակուածին տեղն անցունելու :
 Ինչպէս՝ կուսպաշտները իրենց պաշտած աստ
 ուածներուն և աստուածացեալ մարդոց
 և կնիկներուն արձաններն ու պատկերնե
 րը՝ անոնց նշաններն ըլլալու համար շինած
 են : Հին Հռովմայեցւոց մէջ՝ հաւանական
 է թէ խիստ տգէտ ժողովուրդներէն զատ
 ուրիշ մարդիկ չկային շերակէսի արձանը
 նոյն ինքն շերակէսն է կարծող . և ասանկ
 բոլոր պաշտած աստուածներնին ու աստ
 ուածուհիներնին : Մասնապէս Չինու և
 Հնդկաստանի քուրմերն ալ մինչև սա օրս

քարկանալով դէմ կը կենան՝ երբոր կ'ըս-
 ուի իրենց թէ մարդոց ձեռագործներուն
 երկրպագութիւն կ'ընէք : Եւ աս իրենց վը-
 րայ եղած չարախօսութեանը ստութիւնը
 ցուցնելու համար՝ շատ անգամ աս պա-
 տասխանը կու տան , թէ «Մենէ մէկը եր-
 կրպագութիւն չընէր արհեստաւորին ձեռ-
 քէն նոր ելած արձանի մը , քանզի աստ-
 ուած դեռ անոր մէջը բնակած չէ : Հա-
 պա երբոր սուրբ գետի մը մէջ լուանք
 զանիկա , օծենք ու վրան աղօթք ընենք ,
 ան ատենը ան երկրպագութիւն մատուցած
 հոգինուս բնակարանը կ'ըլլայ » : Սակայն ու-
 միկ ժողովուրդը մինչևանգամ աս որոշու-
 մը կը կորսնցունէ , և իրօք կ'իյնայ երկրպա-
 թիւն կ'ընէ փայտերու՝ քարերու և պատ-
 կերներու : Աս կուսպաշտութեան հակամի-
 տութիւնը այնչափ զօրաւոր է մարդուս սրբ-
 տին մէջ , որ մինչևանգամ Աստուծոյ ընտ-
 բեալ ժողովուրդը՝ որ անոր գործած հրաշք-
 ներն ու սքանչելիքները աչքովը տեսած էր
 Եգիպտոսի մէջ՝ անապատը և խոստացեալ
 երկիրն մէջ , միշտ կուսպաշտութեան մէջ
 կ'իյնար : Կարմիր ծովէն անցան , Սինա լե-
 ռանը ստորոտն ալ վախերնուն դողացին ,
 սակայն քիչ մը ետքը ոսկիէ հորթ մը կանգ-
 նեցուցին ու ինկան առջին երկրպագութիւն
 ըրին : Աւետեաց երկիրն ալ երբոր մտան ,
 տեսան Յորդանան գետին բաժնուիլը , Ե-
 րիքովի պարիսպներուն ինքնիրեն փլչիլը և
 բոլորտիքնին դանուող հեթանոս ազգերէն
 Աստուծոյ վրէժ առնելները , սակայն կըր-

կին շուտով սկսան Բահազու երկրպագու
 թիւն ընել, և ան նոյն ազգերուն կուս-
 քերը պաշտել, թէպէտև իրենց ձայնը լը-
 սելու և զիրենք թշնամիներնուն ձեռքէն
 փրկելու բոլորովին անկարող աստուածներ
 ըլլանին փորձով շատ անգամ ալ տեսած
 էին : Եւ իրենց կենդանի ու ճշմարիտ Աս-
 տուծոյն սքանչելի դործքերուն յիշատակներն
 ալ երկրպագութեան առարկայ ըրին : Ան
 պրինձէ օձը, որ Աստուծոյ արդար դատա-
 պարտութենէն իր ողորմութիւնովը հրաշա-
 լի կերպով մը աշատուելուն յիշատակն
 ըլլալու համար պահուած էր, կուսքերու
 կարգն անցուցին, սխալմամբ ան ազատու-
 թեան նշանը կամ յիշատակը նոյն իսկ ա-
 զատիչին տեղը դնելով : որ աս պատճառաւ
 Եղեկէի աստուածաւախ թագաւորը պարտք
 համարեց իրեն զանիկա կոտորտել և արհա-
 մարհելով Նեեսդան անուանել, որ ըսել
 է պրինձի կոտոր : Դ թագ . ժԼ . 4 : Բայց
 թէպէտև աս կուսպաշտութեան թանձր խա-
 ւարը վերջապէս փարատեցաւ զնաց շրէից
 վրայէն, սակայն անոր հետ մէկտեղ հոգևոր
 բաներու նշանները նշանակուած բաներուն
 տեղն առնելու հակամիտութիւնն ալ չվեր-
 ցաւ մէջերնուն : Փրկչին մերոյ աշխարհք
 եկած ատենէն կ'երևի որ շատ մեծ հոգ
 կը տանէին օրէնքին արտաքին արարողու-
 թիւնները ճշգուլթեամբ կատարելու, և ժո-
 դովուրդը կը կարծէր թէ պիտի փրկուի, թէ-
 պէտ շիտակը նայելով " իժերու ծնունդներ "
 էին : Մատթ . ժԻ . 34 : Եիսական օրէնքը

անանկ զգուշութեամբ կրպահէին, որ մինչև սամիթին՝ անանուխին և չամանին տասանորդը կը վճարէին, սակայն ֆրկիչն մեր կ'ըսէ, «Օ՛ձեր՝ իժերո՛ւ ծնունդներ, ի՞նչպէս պիտի փախչիք գեհէնին դատապարտութենէն», : Մատի . 11 . 33 : Իրենց յոյսը՝ ըրած պատարագներնուն, բռնած ծովերնուն ու կատարած տօներնուն և ուրիշ արարողութիւններնուն վրայ կը . քանզի սխալեցան, և ան մեծ ֆրկիչն ու փրկութիւնը ցուցնող արտաքին արարողութիւններն ու նշանակները փրկութեան միջոց սեպեցին . Ահա այսպէս բազմաթիւ քրիստոնէաներ ալ հաւատքնին անմիջապէս Յիսուս Քրիստոսի վրայ հաստատելնուն տեղը՝ եկեղեցւոյ խորհուրդներուն և արարողութիւններուն վրայ դրած են յոյսերնին, և ամենին չեն հասկընար ան խորհուրդներուն ունեցած բուն միտքը :

Ըրդ՝ հաղորդութեան խորհուրդը զարմանալի յարմարութիւն մը ունի մարդու սրտին մէջը արմատացած աս մտորական հակամիտութեանը դէմն առնելու : Անոր մէջը գործածուած նիւթերուն վրայ մարդիկ իսաբող կամ մտորեցընող բան մը չկայ : Ամէն տեղ գտնուող և բոլոր մարդոց զիտցած հասարակ նիւթերն են, որ աս խորհուրդին մէջ ազօթքով և գոհութիւնով մէկ յատուկ սրբազան նստատակաւ մը կը գործածուին : Եւ անոնց ցուցուցած ճշմարտութիւնը, որ աս է՝ թէ ինչպէս որ հացն ու գինին մարմինը կը սնուցանեն և կը զօրա-

ցրնեն , անանկ ալ խաչեալ Քրիստոս՝ հա-
 ւատքով ընդունուելով՝ հողին կը սնուցանէ
 և կը զօրացրնէ , և այսպէս հողեոր կերա-
 կուր կ'ըլլայ մարդոց . աս ճշմարտութիւնը՝
 անանկ պարզ ճշմարտութիւն մըն է , որ
 ամենէն տգէտ չքրիստոնեան անգամ դի-
 րաւ կրնայ միտք առնել : Թէոր աս նը-
 շանակներն ալ ան պղինձէ օձին պէս մէկ
 սքանչելի աղատութիւն մը գործած ըլլա-
 յին , կամ Թէոր հիմա հրաշք գործե-
 լու զօրութիւն ունենային և բոլոր հիւանդ-
 ներն ու տկարները բժշկելու կարողանային
 ան ատենը ևս առաւել պիտի աճեցընէին
 աս վտանգաւոր հակամիտութիւնը , որուն
 վրայ կը խօսինք հիմա . Թէպէտև ան ժա-
 մանակն ալ անոնց երկրպագութիւնն ընելը
 ան նոյն մեղքը կ'ըլլար , որուն սրաւիժը
 տուաւ աստուածապաշտ Եգէկիա Թաղաւո-
 ըր անանկ սզդու կերպով մը : Բայց մեր
 Քրիկիին իր անհուն իմաստութիւնովը ընտ-
 րած նիւթերուն վրայ ասանկ մէկ զօրու-
 թիւն մը չենք տեսներ հիմա , և անցեալ
 ժամանակաց մէջ ալ անոնց հրաշք գործելը
 հաստատող պատմութիւն մը բնաւ ուրեք չենք
 տեսներ : Չկայ անանկ բան մը աս նիւթե-
 րուն վրայ որ կարող ըլլայ յափշտակել
 մարդուս միտքը և Թող չտալ որ մեր բո-
 լոր խորհուրդները անոնցմով ցուցուած
 ան մեծ ճշմարտութիւններուն վրայ ըլ-
 լայ :

Երկրորդ՝ ասկէ տարբեր ուրիշ մը

լորական հակամիտութիւն մըն ալ կայ բը
 նութիւններնուս մէջը, որ անոր ալ գէմն
 առնուելու է: Ինչպէս որ հակամէտ է
 մարդս հոգևոր բաները ծախելու, անանկ ալ
 բնական հակամիտութիւն մը ունի հոգևոր
 բաները ծախելու: Եւ ուստի անանկ ալ
 ուխտներ գտնուելու են, որ ստէպ ստէպ և
 կանոնաւոր կերպով մը շարժեն մեզ հո-
 գևոր բաներու վրայ խորհրդածութիւն-
 ներ՝ աղօթք և Աստուծոյ երկրպագութիւն
 ընելու: Ինչպէս կիրակի օրը, որ հաստատ-
 ուած է ոչ միայն մարմնաւոր չանգստեան
 համար, այլև Քրիստոսի աւետարանը քա-
 ղողելու՝ Աստուծոյ երկրպագութիւն ը-
 նելու և ուրիշ հոգևոր գործեր կատարե-
 լու համար: Առանձին և ընկերութեամբ
 աղօթք ընելն ալ հարկաւոր է հոգևոր շի-
 նութիւն գտնելու, հաւատքով զօրանալու
 և ջերմեռանդութիւնով աճելու համար:
 Սակայն բոլոր անոնցմէ ՚ի զատ ուրիշ
 բան մը պէտք է՝ որ շատ որոշ կերպով
 մը առջննիս բերէ մեր խաչեալ Փրկիչը, և
 մտքերնիս ձգէ մեր փրկութեանը համար
 եղած վճարքը: Կարօտ ենք անանկ բանի
 մը, որ ստիպէ մեզ ինքրզինքնիս աղէկ մը
 քննելու, և Աստուծոյ ծառայելու համար
 ըրած անձնական ուխտերնիս սրտառուջ կեր-
 պով մը նորոգելու: Թէոր ամէն քրիստոն-
 եայ կատարեալ սուրբ ըլլար, թէոր ա-
 մենուս սրտին մէջ կատարեալ սէր թագա-
 ւորէր՝ առ Աստուած և առ մարդիկ, ան-
 ստենը պէտք չէր ըլլար նիւթական նշա-

նակներով յիշատակել զՔրիստոս և այսուհետ
 զինքը սիրելու և իրեն ծառայելու համար
 ունեցած պարտականութիւններնիս յիշել :
 Սակայն որո՞ւ քով կայ ասանկ կատա-
 րելութիւն : Աշխարհիս ամենէն սուրբ
 քրիստոնեան կարօտ է բոլոր ան օգնու-
 թիւններուն , զորոնք Քրիստոս դրած է՝ մեր
 հաւատքը յոյսն ու սէրը աճեցնելու հա-
 մար : Քանզի քրիստոնեան թէպէտ ներսի
 մարդովը Աստուծոյ օրէնքին կը հաւնի , բայց
 Պօղոս առաքեալին նման , “ ուրիշ օրէնք
 մը կը տեսնէ իր անդամներուն մէջ՝ որ իր
 մտքին օրէնքին դէմ կը պատերազմի ” : Զե-
 առվ . 1 : 22 , 23 : Եւ մինչդեռ աշ-
 խարհիս մէջ զատուած է իր հաւատքին
 առաջնորդէն և կատարողէն , աս խորհուր-
 դը ամենապատուական և ամենասիրելի ար-
 տօնութիւն մը կը սեպէ իրեն , որ զինքը
 Քրիստոսի կրօնտեցունէ և կ'առաջնորդէ
 ուտելու ան ճշմարիտ հացէն՝ որ 'ի յերկ-
 նից իջեալ է : Ներսուանց փորձով կը տես-
 նէ որ՝ երբոր Քրիստոս ապաշուեալ հա-
 ւատքով ընդունուի , ան ատենը “ անոր մար-
 մինը ճշմարիտ կերակուր կ'ըլլայ . և անոր
 արիւնը ճշմարիտ ըմպելիք ” : Յռվ . Գ . 56 :
 Առաջին քրիստոնեաները ստէպ ստէպ հա-
 զորդութիւն կ'ընէին : Ասիկա մեծ միա-
 թարութիւն և զօրութիւն էր իրենց՝ հա-
 լածման և նեղութեան ժամանակները . և
 ցաւալի բան է որ հիմակուան քրիստոնե-
 տաները եռանդ չունին աւելի յաճախ և
 առաւել կենդանի հաւատքով մը հաղոր-

դուժինն առնելու, և անոր հագեոր նը-
շանակութիւնը սրտովսին զգալով իմանա-
լու 3



Գ Լ ՈՒ Խ Բ

Ա՛ խորհուրդին Հոգևոր Օգուստինեը :

Ա՛յ յայտնի է որ հաղորդութեան խորհուրդին ընծայած օգուստինեը անոր մէջը գործածուած նիւթերէն է . քանզի շատ մարդիկ կան հաղորդութիւն առնող , և կրկին մեղքերնուն մէջը թապալտիող . շատ մարդիկ կան հաղորդութիւն առնող , և հետք մէկտեղ դատապարտութիւն ընդունող :

Ա՛նոր հոգևոր օգուստինեը Աստուծոյ շնորհքէն կախեալ են . և աս շնորհքը կը պրտի առնոց՝ որչա՛ս աս նիւթերը Բրիտանի սահմանած ճորտէն կը մտաւարարեն և կ'ընդունին : Օգուստինեք ընդունելու ենք հաւատքով՝ խոնարհութեամբ և սիրով , դէպի Աստուած նա յերով՝ որ իր օրհնութիւնները տայ մեզի , և դէպի Բրիտանի՝ որ ներկայ գտնուի մէջերնիս Սուրբ Հոգւոյն ազդեցութիւններով . երբոր աս կերպով հաղորդութիւն առնենք , շատ մեծ օգուստինե կը քաղուին աս խորհուրդին :

Ե . Քրիստոնէական ողջամիտ վարդապետութիւնը հաստատուն կը մնայ եկեղեցիին մէջը :

Ինչպէս որ առաջ ըսինք՝ անով կը յիշատակենք Քրիստոնէութեան ան մեծ հիմնական ճշմարտութիւնը՝ թէ միայն Քրիստոսի չարչարանքներովն ու մահուամբը կրնանք մեղքերնուս թողութիւն գտնել . թէ ան է մեր միակ փրկիչը : Աս խորհուրդը կը ցուցնէ թէ Քրիստոս ձրի կատարեալ փրկութիւն կը պարգևէ իր արժանաւորութեամբը և կատարելապէս կը քաւէ մարդոց մեղքերը , և այսպէս կը փրկէ բոլոր իրեն հաւատացողները ձրի շնորհքով : Աս ճշմարտութիւնը՝ հասկընալով և սրտանց ընդունողը աւետարանին միւս էական վարդապետութիւններէն մէկը չկրնար մերժել : Քրիստոս իրեն՝ ամէնը ու ամենուն մէջն է : Ան է ճանապարհ՝ ճշմարտութիւն և կեանք , և Ան պիտի առաջնորդէ իրեն հետևողներուն ու զինքը իրենց առաջնորդ ընելու փափաքողներուն : Հերետիկոսութիւնը յաւետ մարդու սրտէն կը մտնէ՝ եկեղեցիին մէջը , քանթէ գլխէն : Գրեթէ բոլոր մոլորութեանց սկզբնական պատճառը մարդու սրտին ապականեալ փափաքները ու անձնահաճ կիրքերն եղած են : Սրբութիւն խոնարհութիւն և անկեղծութիւն ունեցող մարդը ոչ հերետիկոսութեան մէջ կ'լցնայ և ոչ նոր ու օտար վարդապետութիւն կը քա-

րողէ : Եւ որովհետեւ աս հաղորդութեան խորհուրդն ալ շարունակ մեզ Քրիստոսի կը ձգէ , մեր կորուսեալ վիճակը միշտ միաբերնիս կը բերէ , և զՔրիստոս կը ցուցնէ մեզի մի միայն յոյս , և այսպէս խոնարհութիւն՝ հաւատք և սէր կը զարթուցանէ ներսիդինիս . վասնորոյ ան մոլորութեանց պատճառ եղող կիրքերուն և զգացումներուն դէմ ամուր սրտնէշ մը կ'ըլլայ : Բոլոր հաւատացեալները ճշմարտութեան Ազգիւրին և Հեղինակին կը տանի . և զանիկայ Քրիստոսի հաստատած նպատակաւը ընդունողները աճեցուն սիրով կը սիրեն ճշմարտութիւնը , և մեծ ատելութիւնով կ'ատեն ստութիւնը :

1 . Այս խորհուրդին ուղիղ կերպով կատարուելն յառաջ եկած մէկ երկրորդ օգուտն ալ աս է . միութիւն և եղբայրական սէր :

Այնիկայ « Քրիստոսի մարմնոյն հաղորդութիւնն է » : « Ինչու որ մենք շատերնիս մէկ հաց՝ մէկ մարմին ենք . վասն զի աւանդնիս ալ ան մէկ հացէն կը վայելենք » : Բ. Կորնթ . Ժ . 16 , 17 : Աս խորհուրդով հաւատացեալները յայտնի կ'ընեն աշխարհի թէ ամէնն ալ միւսնոյն տէրօջը ծառաներն են , և միւսնոյն փրկութեան յոյսը ունին : Աս խորհուրդով կը խոստովանին թէ Քրիստոսի մարմնոյն անդամներն են , և ուստի Քրիստոսի սիրովը մէկզմէկու հետ միա-

ցած եղբայրներ են : Աստուած խաղաղութեան և սիրոյ Աստուած է . և Տէրն մեր կը հրամայէ Հրէին որ թէոր իր ընծան սեղանին վրայ բերած ատենը հոն միտքը գայ՝ թէ իր եղբայրը իրեն դէմ բան մը ունի, հոն ձգէ իր ընծան սեղանին առջևը, և երթայ առաջ եղբօրը հետ հաշտուի, ու ետքը գայ օր իր ընծան մատուցանէ : Մատթ. Ե. 23, 24 : Այսպէս Աստուած կը պահանջէ մեզմէ՝ որ հանրական սիրով աս ընթրիքին մօտենանք : Նախանձութիւնը՝ ատելութիւնը և հպարտութիւնը տեղի գտնելու չեն հոն, ուր կը յիշատակուի անհուն սէր և զթութիւն : Ան տեղը Աստուծոյ սէրը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը կը թագաւորէ : Եւ ո՛վ որ խոնարհութիւնով ու հաւատքով կու գայ հոն, առ Աստուած և առ մարդիկ ունեցած սէրը կ'աճի կը զօրանայ, և մասնաւորապէս իր « հաւատքի ընտանիներուն », վրայ ունեցած սէրը : Մեծ երախտագիտութիւնով և սիրով կը յիշէ ան նոր պատուիրանքը, որ իր Տէրը տուաւ աս ընթրիքը սահմանած ատենը, և իր սիրտը սիրով կը լեցուի բոլոր ան նոյն պատուական հաւատքը ունեցողներուն և ան նոյն Տէրով ծառայողներուն վրայ : Երբոր հաւատացեալը հաղորդութեան մասնակցած ատենը ասանկ սիրով կ'աճի, ան ատենը աս խորհուրդին մեծ նպատակներէն մէկը կը կատարուի իր վրայ :

Անկէ ի զատ՝ Քրիստոսի եկեղեցւոյն ճշը-

մարիտ միութիւնը կ'երևի աս խորհուրդին մէջ : Քրիստոսի եկեղեցին մէկ է՝ ոչ թէ արտաքին կանոններով, քանզի անոր արտաքին կանոնները բազմութիւն են և շատ տարբերութիւններ կայ մէջերնին . ոչ թէ լեզուով, քանզի անոր բռնած հաւատոյ կանոնը՝ Աստուածաշունչը արդէն երկու հարիւր լեզուով կը կարդացուի . ոչ թէ ազգաւ, քանզի անոր անդամներէն բոլոր ազգաց մէջ և ամէն կառավարութեան տակ կը գտնուին . և ոչ մանրմունք և շատ հարկաւոր չեղող վարդապետութեանց մէջ է անոր միութիւնը . հապա՛ մէկ է Քրիստոսով : Ան անոր գլուխն է : Անոր բոլոր ճմարիտ անդամները անկէ միայն փրկութիւն կը յուսան, միայն Անոր միջնորդութեամբը շնորհաց և ողորմութեան աթոռին կը մօտենան, Անոր խօսքը իրենց գերագոյն օրէնքը կը բռնեն, և այսպէս ճմարիտ ու անխարդախ եղբայրական միութիւն կը վայելեն :

Գ . Այս խորհուրդին ընծայած օգուաներուն մէկն ալ աս է՝ որ մէկ աստիճան-միւսին մը կու տայ Քրիստոսի եկեղեցին, որ առանց աս խորհուրդին չկրնար ունենալ անտեսանելութիւնը :

Հաղորդութեան խորհուրդը կատարելով հաւատացեալները տեսանելի կերպով մը զՔրիստոս կը դաւանին բոլոր մարդոց առջևը : Անով Աստուծոյ հետ ըրած ուխտեր-

նին կը նորոգեն , և այսպէս անիկա ուխտի
 կնիք մը կ'ըլլայ իրենց : Քանի անգամ որ
 ուտեն աս հացը և խմեն աս գաւաթը ի-
 րենց Տէրը յիշատակելու համար , յայտ-
 նի է որ շատ ազդու եղանակաւ մը ինքը-
 զինքնին նուիրած կ'ըլլան անոր՝ որ մեռաւ
 իրենց համար և նորէն յարութիւն առաւ :
 Եւ թէոր եկեղեցին աղէկ հող տանի աս
 իր հաղորդութենէն ետ պահելու աշխար-
 հային մարդիկը՝ խաբեբաները՝ ստախոսնե-
 րը արծաթասէրները՝ հեշտասէրները և բո-
 ւոր ինքըզինքնին Քրիստոսի ծառայութեանը
 չնուիրողները և աղօթասիրութեամբ ու ա-
 ւետարանին հնազանդելով կեանքերնին չան-
 ցունողները , ան ատենը աս խորհուրդին կա-
 տարուելովը տեսանելի կերպով մը կը զատ-
 ուին Հոգւոյն Արքայ վերստին ծննդեամբը
 Աստուծոյ ժողովուրդն ըլլալ խոստովանող-
 ները՝ աս խոստովանութիւնը չընողներէն :
 Ասով յայտնի կը տեսնէ ամէն մարդ՝ թէ
 եկեղեցին հաւատացելոց միութիւն մըն է ,
 Աստուծոյ ծառայելու՝ անոր աւետարանին
 հնազանդելու և անոր փառքին համար ապ-
 րելու ան վսեմ ուխտովը մէկզմէկու հետ
 կապուած :

Դ . Ըս սահմանադրութեանը ուղիղ կեր-
 պով կատարուելէն յառաջ եկած հոգևոր
 օգուտներուն մէկն ալ շնորհքով աճումն
 է :

Կարելի է ըսուի թէ շնորհքով աճիլը

տաւել քան զառաւել Քրիստոսի նմանիչ
 և անոր պատկերին կերպարանակցիլ է . և
 աս դործն ալ միայն Սուրբ Հոգիին ձեռ-
 քովը կը կատարուի , ոչ թէ խորհուրդնե-
 րով : Աստ առանկ է . բայց Իսաո՞ր կը սրբ-
 բացընէ Սուրբ Հոգին հաւատացեալները .
 Չէ որ ճշմարտութիւնով կը կատարէ աս
 դործը : “Սրբէ անո՞րք քու ճշմարտութիւ-
 նովդ” , ըսաւ Տէրն մեր իր ազօթքին մէջ .
 Աստուծոյ հոգին ճշմարտութիւնը չգիտցող-
 ները չարբեր , այլ միայն ճշմարտութիւնը
 գիտցողները և անոր վրայ մտածողները :
 Ան մարդը որ Քրիստոսի վրայ չտորհիր ,
 անոր նման ալ չկրնար ըլլալ : “Տէրո՞ջը փառ-
 քը տեսնելով է՝ որ նոյն պատկերին կը
 նորոգուինք՝ Աստուծոյ Հոգիովը” : Ի Կորնթ .
 Գ . 18 : Արդ՝ աս խորհուրդն ալ մեզ շը-
 նորհքով կ’աճեցունէ , քանզի միտքերնիս կը
 բերէ ան աչդոս և խառնուող ճշմարտութիւն-
 ները և խորհրդածոթիւնները , որոնցմով Սուրբ
 Հոգին կը սրբէ մարդոս սիրտը : Աս ճշմար-
 տութիւններէն և խորհրդածութիւններէն,
 մէկ քանին հոս համառօտապէս յիշենք :

1 . Այ խորհուրդը հաղորդուողին միտքը
 կը բերէ Քրիստոսի մահուանը պարագանե-
 րը . և աս պարագաներն ալ՝ Աստուծոյ շը-
 նորհքովը շատ յարմարութիւններ ունին անոր
 գրտէն դուրս հանելու հպարտութիւնը՝ անձ-
 նասիրութիւնը և չար կիրքերը , ու կարու
 դացունելու գինքը՝ որ աշխարհս յաղթէ :

Ե . Նշմարիտ բրիտանեան աս պարագաներէն կը սորվի Աստուծոյ հանքին հնազանդիւ աս հեանքին բոլոր անցներուն մէջ :

Փրկիչն մեր ամենամեծ նեղութեանց մէջ կատարեալ հնազանդութիւն ցուցուց Աստուծոյ կամացը : Իր աշակերտները չկրցան ժամ մը իրեն հետը արթուն մնալ՝ երբ ինքը մահու չափ տրտմած էր՝ խիստ սաստիկ տառապանաց մէջ ինկած , և վերջապէս ձգեցին զինքը ու փախան : Իր ունեցած տազնապին սաստիկութենէն խօշոր արիւնի կաթիլներու պէս քրտինք կը թափէր . քանզի ան ատենը իր հոգին կը զոհուէր աշխարհիս մեղացը համար : Մարդոցմէ ցաւակից մը չունէր , ոչ բարեկամ և ոչ մխիթարիչ կար իր քովը : Սակայն բոլոր աս իր դառն տառապանացը մէջ կատարելապէս հնազանդեցաւ Աստուծոյ կամացը , և կ'աղօթէր ըսելով , “ Չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ ” : Մեր փրկիչն տուած աս օրինակը իր աշակերտներէն շատերուն կարողութիւն տուաւ նեղութեան և տառապանաց ատեննին համբերութեամբ Աստուծոյ կամացը հնազանդելու , և իրեն պէս ըսելու՝ “ Չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ ” : Կամանաւանդ անոր մահը յիշատակած ատեննին Հոգւոյն Սրբոյ ձեռօքը ևս առաւել աճեցան աս համբերութեան և հնազանդութեան ջնորհքովը :

Ի . Մտ խորհուրդին մասնակից ըլլողը Քրիստոսի մահուանը պարագաներէն կը սորվի նաև ներքէլ իր Թշնամեացը և աղօթք ընել անոնց համար :

Մեր փրկիչը միշտ բարերարութիւն և մարդասիրութիւն ցուցուց ամենուն : Տգէտներուն ճշմարտութիւն սորվեցուց , հիւանդները բժշկեց , մեռեալները յարոյց , դէւերը հանեց , և այսպէս բոլոր մարդոց մէկ օրինակ մը տուաւ հատարեալ արդարութեան՝ սրբութեան և մարդասիրութեան : Եւ երբ աս ամենուն փոխարէնը իր Թշնամիները նախատինք՝ տանջանք և մահ հատուցին իրեն , շուտով անոնց ամէնն ալ սատկեցունելու տեղը՝ աղօթք ըրաւ իր Հօրը ըսելով , “ Թողութիւն տուր ատոնց , ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն ” : Արէժիմնորութիւնը սիրող մարդը չկրնար Տէրունական սեղանին մօտենալ : “ Օրհնեցէք ձեզ անիծողները . բարի՛ ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն , և աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչրկեն ու կը հալածեն ” , ասոնք են ահա աս խորհուրդին մեզի յիշեցուցած խրատները :

Գ . Քրիստոսի աշակերտը Տէրունեան սեղանէն աս ալ կը սորվի՝ Թէ համբերութեամբ տանելու է Թշնամիին տուած նախատինքները :

Սեր Տէրը « կը նախատուէր , և փոխարէնը չէր նախատեր . կը չարչարուէր , ու սպառնալիք չէր ըներ . հապա ինքրզինքը արդարութեամբ դատողին կը յանձնէր » , ինք ասանկ ըրաւ , « մեզի ալ օրինակ թողուց՝ որ իր շաւիղներուն հետեւինք » : Ե. Պէ. . Բ . 21 . 23 : Համբերութեամբ և հեղութեամբ վրանիս եկած անարգանքները տանելու եմք , ձեռքերնուս եկածին չափ՝ չարին տեղը բարիք հատուցանելով : Ըսել չեմ ուզեր թէ չարերուն տուած վնասներուն ու ըրած անիրաւութիւններուն փոխարէնը պահանջելու չենք : Երբեմն քրիստոնէական սարտք մը կ'ըլլայ վրանիս՝ որ մեզի անիրաւութիւնը նողները դատաստանի քաշենք : Քանզի նախ՝ չար ու անօրէն մարդը անզուսպ թող տալով՝ որ երթայ ուզած չարագործութիւնը ու բռնութիւնը ընէ , շատ մեծ վնաս հասուցած կ'ըլլանք իրեն : Թէոր աղաչանաց մտիկ չընէ ու խրատի չգայ , ուրիշ օրինաւոր միջոցներով զսպելու է , եթէ ոչ համարձակութիւն կ'առնէ չարագործութիւնը ընելու , և կարելի է վերջապէս յաւիտենական մահուամբ կը դատապարտուի : Երկրորդ՝ մէկուն այսինչ չարագործութիւնը անզուսպ թողուելովը ուրիշներն ալ կը գրգռուին նոյն չարագործութիւնը ընելու : Քանզի անոր ան չարութիւնը անպատիժ թողելովնիս՝ ուրիշներուն թոյլտուութիւն տուած կ'ըլլանք՝ որ ան չարութիւնը անոնք ալ ընեն : Եւ երրորդ՝ ոչ միայն մեր ի-

բաւունքը նայելու ենք, այլ ուրիշներուն ալ : Երբոր մէկը անխրաւութիւն մը ընէ և զինքը անպատիժ թողունք, մեր անմեղ ընկերներուն վնաս ըրած կ'ըլլանք : Քանզի ան մեզ վնասողը անպատիժ մնալով՝ համարձակութիւն կ'առնէ մեր ընկերներն ալ վնասելու : Միշտ փնտռելու ենք օրինաց պաշտպանութիւնը . սակայն ան պաշտպանութիւնը փնտռելիս ալ հանդարտ և օրինաւոր կերպով մը ըլլալու է, առանց վրէժխնդրութեան ոգիի, և յանցաւորին ալ օգուտին համար : Պօղոս առաքեալ պարզ ու աղուոր օրինակ մը տուած է մեզի սաբանին վրայ : Մեծ մեծ զրկանքներ կը կրէր համբերութեամբ . սակայն իր իրաւունքը պաշտպանելու տեղն ալ զիտէր : « Բայց Պօղոս ըսաւ անոնց . Մեզ յայտնապէս ծեծելով՝ որչգատապարտուած Հռովմայեցի մարդիկ ենք, բանտը դրին . ու հիմա գաղտնիկ կը հանեն մեզ . առանկ չէ՛, հասաւ թող իրենք գան ու մեզ հանեն : Գործ . Ժ.Օ . 37 : Տես ևս ան սաստիկ յանդիմանութիւնը, որ ըրաւ քահանայապետին՝ երբ ան ընդդէմ օրինաց հրամայեց որ զարնեն իրեն : Գործ . ԻԳ . 3 :

Դ . Քրիստոնեան ֆրկչին մերոյ քաշած չարչարանքներուն վրայ խորհրդածութիւն ընելով՝ զօրութիւն կ'առնէ ան մարմնաւոր և հոգեւոր չարիքներուն դիմանալու . որոնք շատ անգամ իր բոլորտիքը կ'առնեն :

Ինանկ ժամանակներու մէջ կը զգայ թէ
 ինչ անգին ճշմարտութիւն է ան՝ թէ ինք
 մէկ Քահանայապետ մը ունի, որ կարող
 է իր տկարութեանը հետ մէկտեղ չար-
 չարուիլ, ամէն կերպով փորձը առած ըլ-
 լալով մեղի նման: Չկայ անանկ մարմնա-
 ւոր ցաւ մը, որուն համը առած չըլլայ մեք
 Փրկիչը. չկայ անանկ մեծ զրկանք, որ ա-
 նոր քաշածին հաւասարի: Եւ երբ հա-
 ւատացեալը մեղքով սրաշարուած կը զտնէ
 ինքըզինքը, և անանկ կը զգայ թէ Աստ-
 ուած երէսէ ձգեր է զինքը, և թողուցեր
 է որ տարակուսանաց՝ երկիւղներու և հա-
 կառակորդէն փորձութիւններու մէջ ինայ,
 ան ատենն ալ կրնայ իր Փրկիչը՝ խաչին
 վրայ ունեցած փորձառութիւնովը՝ ցաւակից
 ըլլալ իրեն և օգնութեան հասնիլ: Մեր
 մեղքերը իրեն սեպեց. և անոնց անէծքը
 ինք իր անձամբը կրեց: Աստուծոյ երեսին
 լոյսէն զրկուեցաւ. բոլոր իր հոգևոր միւ-
 թարութիւնները կտրեցան. և ժամանակ
 մը խաւարին իշխանութեանը տակը մնաց:
 Իր աշակերտներէն մէկը երբէք ասկէ ա-
 ւելի անյոյս վիճակի մէջ չկրնար լինալ:
 Ուստի բոլոր փորձութեան և տառապանաց
 մէջ ինկող հաւատացեալները կրնան Քր-
 իստոսի երթալ, գիտնալով թէ ան անոնց
 փորձը առած և անոնց ամէնն ալ յաղթած
 ըլլալով՝ կարող է փորձանաւորներուն ալ օգ-
 նական ըլլալ:

Ե . Ը ալ կը սորվինք Քրիստոսի մահուանը պարագաներէն՝ թէ պարտական ենք հաւատարմութեամբ և երկիւղածութեամբ կատարել բոլոր մեր ընտանեկան և ընկերական պարտքերը :

Մեր Փրկիչը իր մահուան տագնապներուն մէջը չմոռցաւ ան , որ ըստ մարմնոյ իր մայրն էր : “Յիսուս երբոր տեսաւ իր մայրը , և ան աշակերտը որ կը սիրէր , որ մօտը կայներ էր , ըսաւ իր մօրը . Ո՛վ կին՝ ահա՞ քու որդիդ : Ետքը ըսաւ աշակերտին . Ահա՞ քու մայրդ . և ան ժամանակէն աշակերտը անիկայ իր քովը առաւ .” : Եւ. Ե. 26 , 27 : Ասանկով որդիական սիրոյ ազդու օրինակ մը տուաւ իր աշակերտացը : իր խօսքովը սորվեցուցած է մեզի թէ “իրեններուն հոգ չտանողը հաւատքը ուրացած է , ու անհաւատնէ մըն ալ գէշ է” : Ե. ՏԵԺ . Ե . 8 : Ճշմարտապէս զՔրիստոս յիշատակողները և զինքը իրենց օրինակ բռնողները՝ մեծ եռանդով իրենց մարմնոյ կողմանէ ազգականներուն թէ՛ հոգևոր և թէ՛ մարմնաւոր օգուտը փնտրուելու են : Խիստ շատ փափաքելու և աղօթք ընելու են որ բոլոր ազգականներնին սրբանան Ատուծոյ Հոգիովը , որ յաւիտենական փառաց մէջ ալ իրենց ընկերն ըլլան : Այսպէս պիտի աշխատին ընտանիքներնուն մէջ բարեպաշտութիւն յառաջ բերելու և ասանկով Աստուած պիտի պատուուի , անոր անունը յար-

գութիւն գտնէ և իր խօսքը պիտի կարգացուի սիրով և հնազանդութեամբ՝ ոչ միայն հրապարակաւ, այլ նաև ընտանեօք և հասարակ հաղորդակցութեանց մէջ ալ : Հատ ուրիշ խրատական պարագաներ ալ պիտի գտնեն անոնք, որ մեր օրհնեալ Փրկչին վերջին ժամերուն և մահուանը վերայ խորհրդածութիւն ընելու սովորութիւն ունին : Ասանկ խորհրդածութիւններով հաւատացեալը կ'աճի շնորհքով, և առաւել ևս կը կերպարանակցի իր Տէրօջը՝ խօսքով և գործքով :

2 . Ըստ խորհուրդը շատ ազդու եղանակաւ մը կը ցուցնէ քրիստոնէին՝ մարդուս անկէալ վեճակը՝ իբրև մեղաւոր :

Ինչո՞ւ համար Աստուծոյ որդին « վշտաց տէր և ցաւոց տեղեակ եղաւ » : Ինչո՞ւ համար « մարդոցմէ անարգուեցաւ, ու երեսէ ձգուեցաւ » : Ինչո՞ւ համար « Տէրը ծեծելով ցաւերու մատնեց զինքը, և անոր անձը մեղաց համար զոհ ըրաւ » : Եսայ . 53 . 3 . 10 : Անորհամար որ միայն աս փրկանքը կարող էր ազատել զմարդիկ յաւիտենական մահուանէ : Մենք ամէնա ալ քնականապէս բարկութեան որդիք ենք, « [Թշամի Աստուծոյ՝ մեր չար գործքերովը », և անոր օրէնքին դատապարտութեանը տակը ինկած : Ան դատապարտութիւնը որչափ մեծ ըլլալը և ան կործանմանը որչափ ստոյգ ըլլալը կ'իմանանք Քրիստոսի չարչարանքներէն և մահէն : Անհախորդ ապառիչ մը պէտք

էր մեղ դժոխքէն ազատելու համար : Երբ
կը տեսնենք Աստուծոյ յիշատակն և սիրելի
որդւոյն Գողգոթա լեռանը վրայ ան դառ-
նակսկիծ մահը ճաշակելը՝ մեր մեղացը
ծանրութեանը տակը հեծելով, ան ատենը
կը սկսինք իմանալ մեղքին ինչ ըզայը, և իմա-
նալ թէ ինչ մեծ դատապարտութիւն պիտի
ըլար կրելու դատապարտութիւննիս, (թէ-
որ Աստուծոյ շնորհքովը չմաքրուէինք և չհաշ-
տուէինք իրեն հետ՝ Քրիստոսով :

3 . Ըստ խորհուրդը շատ մեծ ազդու-
թեամբ կը տպաւորէ մտքերնուս մէջը Աս-
տուծոյ ահարկու և փառաւոր արդարութիւնն
ու սքանչելի ողորմութիւնը :

Ուրիշ տեղ մը այնչափ երեւելի կերպով
մը յայտնած չէ Աստուած իր արդարու-
թիւնը, որչափ Գողգոթա լեռանը վրայ :
Հոն եղած բաները կը ցուցնեն թէ Աս-
տուծոյ արդարութեանը պահանջմունքները
այնչափ մեծ և անողորբելի են, որ երբ
Աստուծոյ Որդին ինքը իր վրան առաւ ա-
նոնց վճարքը ընելու գործը՝ ամենեկին չթե-
թեցան : Ան ամենադառն տառապանքնե-
րովը իր հոգին տանջուած ատենը պարապ
տեղը աղաղակեց պաղատանօք, « Աստուած
իմ՝ Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր » :
Երեսէ ձգուած, խաւարը բոլորտիքը պա-
տած և դժոխքին զօրութիւնները չորս կող-
մը առած մնաց մինչև ան ատենը՝ երբ ան-
փոփոխելի արդարութեանը վճարքը ըրաւ,
ու ըսաւ՝ « Ամէն բան կատարուեցաւ » : Աս

տեղը ահարկու կերպով մը կը ցուցնէ՝ թէ անհնար բան է որ Աստուած իր սուրբ օրէնքը խանգարէ : Եւ թէոր իր օրէնքը հաստատ պահելու համար իր մէկհատիկ որդւոյն շնայեց , ալ կրնայ ըլլալ որ Քրիստոսի հաւատարմով օրէնքին անէծքէն չը փախչող մեղաւորը դատապարտութենէ ազատ մնայ : Միթէ Աստուած աւելի քաղցրութիւն պիտի ցուցնէ խստասիրտ ու անզեղ մեղաւորին , քան թէ “ իր փառացը լցան ու իր էութեանը բուն պատկերն եզոզին ” : Առանց Քրիստոսի եզոզներուն մաշող կրակ է Աստուած : Իր արգարութիւնը փառաւոր՝ անողորբելի և յաւիտենական է :

Սակայն Քրիստոսի չարչարանացը և մահուանը մէջ Աստուծոյ արգարութենէն աւելի անոր անփոփոխելի գթութիւնը և սիրոյն մեծութիւնը կ'երևի : Աստուծոյ մատեանները գրող ներշնչեալ մատենագիրները չարչարեալ և խաչեալ Քրիստոսը կը ցուցնեն՝ իբրև ամենամեծ ապացոյց անոր սիրոյն մեծութեանը : “ Աստուած անանկ սէքեյ աշխարհը մինչև որ իր միածին որդին տուաւ՝ անոր համար մեռնելու ” : Իրենց առջևը՝ անհնար է մարդկային լեզուով առ համառօտ խօսքէն աւելի ազդուութեամբ ցուցնել Աստուծոյ սիրոյն մեծութիւնը : Թէպէտ “ կը սիրէր որդին , և ամէն իշխանութիւն սուաւ անոր ձեռքը , և ցուցուց թէ իր հաւնած միածին և սիրելի որդին է ” , սակայն աշխարհս ալ անանկ սիրեց

և մեղաւորաց փրկուելուն այնչափ փափաքեցաւ, որ իր “ փառացը լոյսն ” եղողը խաչին անարդական մահուանը ընծայեց ձրիաբար : Չարչարանաց՝ նախատանաց և Սատանային փորձութիւններուն մէջ ձգեց զինքը՝ և չար մարդոց ձեռքը տուաւ՝ որ ըլլայ թէ մեղաւորները փրկուին : Աստուծոյ սիրոյն չափազանցութիւնը ցուցնելու համար ասկէ զօրաւոր նշան գտնելը անհնարին բան է :

Եւ յիրաւի ուրիշ ճամբով Քրիստոսի սէրը ասանկ սքանչելի կերպով չէր կրնար յայտնուիլ : “ Մէկ մարդ մը իր կեանքը իր բարեկամներուն վրայ դնելէն աւելի սէր չկրնար ունենալ ” : Սակայն աս խորհուրդը միտքերնիս կը բերէ՝ թէ Քրիստոսի սէրը ասկէ ալ մեծ էր, քանզի իր կեանքը իր թշնամիներուն վրայ դրաւ : Մենք “ յանցանքներու մէջ մեռած՝ և առանց Քրիստոսի էինք, ու հեռացած Իսրայէլի բաղաքակցութենէն, և օտարացած խոստմունքին ուխտերէն, ու յոյս մըն ալ չունէինք, և աշխարհի մէջ անաստուած էինք (Եփե. 1. 5. 12), թշնամի Աստուծոյ չար գործքերով ” և անոր օրէնքին անկէճքին առկն ինկած, երբոր Քրիստոս մեր տեղը չարչարուելու եկաւ :

Անոր “ երբ յա-իսկնական էր : Յանկարծ բորբոքած ու քիչ մը ժամանակէն մարելու ” կերք մը չէր : Աշխարհս ըլլալէն առաջ աչքին առջևն էր Գողգոթա լեռը քաշելու տանջանքները : Անկեղծ և սուրբ սիրով

Վառուած կատարեց աս իր մեծ պաշտօնը :
 Իր գալէն առաջ շատ երկար պատրաստու
 թիւններ տեսաւ բազմաթիւ անցքերով .
 Ինչպէս՝ օրէնքին արարողութիւններովը ,
 հրաշքներով , մարգարէներով , և թագաւո
 րութիւններ հանելով ու կործանելով :
 Եւ երբոր ժամանակը հասաւ , մեր բնու
 թիւնը վրան առաւ , ակներև տեսնելով
 թէ ինչ բաներ պիտի անցնին գլխէն մե
 ղաւորները փրկելու համար : Ան նոյն սէրը՝
 որ ի յաւիտենից ունէր , մինչև յաւի
 տեանս պիտի մնայ իր վրայ : Իր ժողո
 վուրդը “ յաւիտեանս յաւիտենից պիտի
 թագաւորէ իրեն հետ , ” : Յայտ . 1Ի . 5 :

Խաչին վրայ յայտնուած աս յաւիտենա
 կան սէրը նաև աստուածային և փառաւոր
 նպատակներ ունեցող սէր մըն էր :

Ըս սիրոյն գործը կործանեալ աշխարհս
 կրկին կանգնեցընել , և անկեալ մարդիկը
 սրբութեան և երջանկութեան վիճակի մը
 բարձրացունել էր : Մեր փրկչին դիտաւո
 րութիւնը ոչ միայն մէկ քանի հոգի
 փրկել էր , այլ աս անկարգ աշխարհէս
 “ նոր երկինք մը և նոր երկիր մը ստեղ
 ծել էր , ուր արդարութիւն կը բնակի , ”
 և ուր պիտի ժողովուին “ շատ ժողովուրդ
 ներ , որոնք մարդ կարող չէ համբել , բո
 լոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն և
 բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդնե
 րէն , ” : Յայտ . 1 : 9 : Զեղձի եկող աւա
 զակը Քրիստոսի չարչարանացը մեծ նպա
 տակներուն մէկ օրինակն է : Ասիկայ ամե

նաչար և ամենաանարդ մարդ մըն էր, սակայն յանկարծ ապաշաւեալ աշակերտ մը եղաւ, անկէ ալ փառաւորեալ հոգւոյ մը փոխուեցաւ: Ան ամօթալի Գողգոթայէն և ան անիծեալ փայտէն յաւիտենական թագաւորին պալատը ընդունուեցաւ: Ան օրը խաչելութեան ան պապակեցունող ծարաւէն և ան դաւնակսկիծ ու աղետալի տանջանքներուն ցաւերէն ու մահուան տագնապներուն մէջը ընկղմած ատենը հանած աղաղակներէն ազատուելով՝ Աստուծոյ արքայութիւնը մտաւ, ուր ոչ ծարաւիլ կայ, ոչ ցաւ և ոչ աղաղակ: Ի՞նչ զարմանալի և սքանչելի փոփոխմունք է աս. և ս'ըջափ մեծ սէր ըլլալու է աս փոփոխութիւնը յառաջ բերող սէրը:

4. Ընդ խորհուրդը միտքերնիս կը բերէ թէ Քրիստոս երկրորդ անգամ փառքով պիտի գայ աշխարհս դատելու համար: «Տերօջը մահը կը պատմէք, մինչև որ ինչը 4այ», Երբոր կը յիշատակենք «շատերուն մեղքերը վերցունելու համար իր մէկ անգամ պատարագ մատուցուիլը», աս ալ միտքերնիս կը բերենք՝ թէ «երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար անոնց՝ որոնք անոր կը սպասեն», Եբր. Թ. 28: Ցաւերով պաշարուած ապրեցաւ ու մեռաւ, սակայն իր շօրը փառքովը պիտի գայ՝ բոլոր իր սուրբ հրեշտակները մէկտեղ առած: Ան ատենը զինքը սիրողներն ու իրեն

Ճառայողները պիտի ցնծան . և զինքը ա-
տող ու արհամարհողները յաւիտենական
աշուղտով մէջ պիտի իյնան :

Բոնք և ասոնց նման ճշմարտութիւն-
ներն ու խորհրդածութիւնները՝ որոնք աս
խորհրդով մտքերնուս առջին կու գան , ան
միջոցներէն են , որոնցմով Սուրբ Հոգին
կ'ազդէ հաւատացեալին և կը լուսաւորէ ու
կը մաքրէ անոր սիրտը ու նեղութեանը մէջ
քաջալերութիւն կու տայ ու կը կարողացնէ
զինքը աշխարհս յաղթելու : Ասանկ միջոց-
ները ուղիղ կերպով գործածելով է որ
քրիստոնեան կը կարողանայ շնորհաց մէջ
աճումն գտնելու և սրբութեան ու շնոր-
հաց աղբիւրին կերպարանակցելու :

Ե . Բո սահմանադրութեանը ընծայած
վախճանական հոգևոր օգուտն աս է , որ
Քրիստոս ինքը յատկապէս կը մերձենայ իր
ժողովուրդին , երբոր իր սուրբ կամբին պէս՝
մէկտեղ կու գան իր փրկարար սէրը յի-
շատակելու : Ար մօտենայ իր ժողովուրդին
ոչ թէ հացին ու գինիին մէջ ներկայ գրտ-
նուելով , այլ խոնարհութեամբ և հաւատ-
քով իրեն հետ հաղորդութիւն ընելու ե-
կողներուն սրտին մէջ բնակելով : Քանի
որ զինքը կը յիշատակեն , ինք ալ զանոնք
կը յիշէ , և ինքզինքը կը յայտնէ անոնց ,
որ աս յայտնութենէն զուրկ է աշխարհս :
Անոնց սիրտը կը լեցունէ երախտագիտու-
թիւնով՝ գղջումով և սիրով : Իր փառքը

կը ցուցընէ անոնց և ճաշակել կու տայ ան
 երկնային երանութենէն, որն որ պիտի վա-
 յելեն երբոր իրեն հետ նստին իր շօրը
 թագաւորութեանը մէջ ու նոր խմեն որ-
 թին պտուղէն՝ ինչպէս որ խոստացաւ իրենց :
 Մատթ . 1.0 . 29 : Կը զօրացընէ զանոնք իր
 չարչարանացը հաղորդ ըլլալու, և քաջ զին-
 ուորներու պէս խստութեանց դիմանալու,
 միտքերնին ձգելով իր խոստմունքը՝ թէ
 “Ան որ կը յաղթէ, իմ հետս իմ աթոռս
 նստել պիտի տամ անոր . ինտոր որ ես ալ
 յաղթեցի՝ ու իմ շօրս հետ անոր աթո-
 ուր նստայ” : Յայտ . 4 . 21 : Աս խորհուրդ
 դով իր հաւատացեալ ժողովրդոցը կը յայտ-
 նէ ինքըզինքը՝ իբրև Ամենակարող Փրկիչ
 և ցաւակից ու բարեգութ Միջնորդ : Տե-
 րունական ընթրիքին ազդեցութիւնները ըստ
 ամենայնի սրբարար և երկնային են անոնց
 որ արժանաւորապէս կը մատչին անոր . և
 շատ մեծ հոգ տանելու ենք անանկ կեր-
 պով մը անոր մասնակից ըլլալու . որ անոր
 ընծայած երևելի և մնայուն հոգևոր օ-
 զուտները ընդունինք : Արև այսպէս հաղոր-
 դութեան խորհուրդը միջոց մը կ'ըլլայ միշտ
 հաւատքով՝ յոյսով՝ և սիրով աճելու :

Գ Լ ՈՒ Խ Գ

Մ . Ի՞նչ պատրաստութիւն պէտք է հաղորդողութիւն առնելու համար :

Ի . Որո՞նց արժան է հաղորդողութիւն ասել :

ՅՕԴՈՒՄԸ Մ

Ի՞նչ պատրաստութիւն ընել պէտք է :

ԸՍՏՈՒՄՈՅ խօսքին մէջ պատուիրուած է որ հաղորդութիւն առնելնէս առաջ ձեռննք ԳՐԻՅԵՆ՝ որ չըլլայ թէ «անարժանաբար» մերձենանք անոր . ու վրանիս «դատապարտութիւն» բերենք : Ուրեմն ամէն հաղորդող պարտական է հարցընել՝ թէ իր կողմէն ինչ պատրաստութիւն ընել պէտք է Տէրօջը սեղանին արժանաբար մօտենալու համար :

Քանի մը բաներ կան, որոնցմով՝ կարելի է ոմանք կարծեն թէ՛ բաւական պատրաստութիւն կ'ըլլայ հաղորդութիւն առնելու. որ շիտակը նայելով՝ ամենեւին պատրաստութիւն մը չըլլար անոնցմով :

Կախ՝ Աստուծոյ գոյութեանը և նախախնամութեանը վրայ հասարակ հաւատք մը ունենալը բաւական պատրաստութիւն չէ հաղորդութիւն առնելու : Այսչափին դէւերն ալ կը հաւատան. և կրնայ ըլլալ որ մարդիկ ալ հաւատան աս բաներուն, և միանգամայն ան մարմնաւոր սրտին տէրը ըլլան, որ Աստուծոյ դէմ թշնամութիւն է :

Գարձեալ՝ ուրիշներուն առջևը ճշմարտապէս բարեպաշտ և Տէրօջը սեղանին մերձենալու արժանի սեպուիլը բաւական պատրաստութիւն չէ : Յուդան արժանաւոր ու հաւատարիմ մէկը սեպուած էր միւս առաքեալներուն առջևը, որ երբ Քրիստոս «Չեզմէ մէկը գիտի պիտի մատնէ», ըսաւ, Տէր՝ միթէ Յուդա՞ն է՝ չհարցուցին, այլ ամէն մէկը իրեն համար հարցուց թէ «Տէր՝ միթէ ե՞ս եմ» :

Ղշմարտութիւնը ուրիշներուն քարոզելով ալ չէնք կրնար ըստ արժանւոյն պատրաստութիւն տեսնել : Վերջին օրը շատ մարդիկ պիտի գտնուին «Տէրօջը անունովը մարգարէութիւն ընող, գեւեր հանող ու շատ հրաշքներ ընող», և սակայն երբեք Ասոր հոգևոր մարմնոյն այսինքն եկեղեցիին անգամ չեղող : Մատթ. 1 : 22 : Տարա-

կոյս չվերցունող ճշմարտութիւն մըն է
 աս, որ շատ մարդիկ ճշմարտութիւնը քա-
 ըրողելու և նախապաշարման ու ստուծեան դէմ
 մաքառելու նախանձաւորութիւննին բաւա-
 կան ասպցոյց կը սեպեն Տէրոջը աշակերտ-
 ներն ըլլալնուն և անոր սեղանին հաղորդ
 ըլլալու աներկբայ արժանաւորութիւն ու
 նենալնուն : Բայց Տէրն մեր ինք իր բեր-
 նովը կը սորվեցընէ թէ հրաշք գործելն ան-
 գամ ստոյգ նշան չկրնար ըլլալ փրկութեան
 ժառանգ ըլլալնուս :

Ուշիշ ասորուածաբանական կատարմը մը ունե-
 նալով, և կամ որոշ շաբաթ կատարելու որոշու-
 նելով ալ պէտք եղած պատրաստութիւնը ու-
 նեցած չենք ըլլար աս ընթրիքին մասնա-
 կից ըլլալու : Կրնայ ըլլալ որ ամէն խոր
 հուրդները հասկընալու չափ ուղիղ և կա-
 տարեալ տեղեկութիւն ունենանք աստուա-
 ծաբանութեան (Ն. Կրնի . 1. 4), և սա-
 կայն ձայն տուող պղինձի՝ հնչեցող ծնծղա-
 ներու պէս ըլլանք՝ զուրկ հաւատքէ ու սե-
 ըէ՛ որ առանց ասոնց անհնար է Աստուծոյ
 հաճոյ ըլլալ : Կրնայ ըլլալ որ մէկ մարդ
 մը աւետարանին բոլոր վարդապետութիւն
 ները ճշմարիտ սեպէ, առանց անոնց հնա-
 զանդելու : Կրնայ ըլլալ որ մի միայն միջ-
 նորդ ճանչնայ զԲրիտոս, առանց երբէք
 անոր ձեռքովը Աստուծոյ մօտենալու : Կր-
 նայ ըլլալ որ մարդոց հնարած սուտ և քը-
 ըխտոնէութեան հակառակ վարդապետու-
 թիւններուն բոլորն ալ մերժէ և Աստու-
 ծոյ խօսքը մէ միայն կանոն հաւատոյ ըն-

դունի, սակայն ասկէ չէնք կրնար հետեցրնել թէ անշուշտ իր « միտքին հոգիովը նորոգուած », է, « և Յիսուս Քրիստոսով նոր մարդ » մրեղած, ու « մահէն կեանքին փոխուած », է : Բայց սակայն հնարաւոր բան է որ իրենց առջի նախապաշարմունքները ձգող և Աստուծոյ խօսքը միայն հաւատոյ կանոն բռնողներէն շատերը կարծեն թէ անշուշտ արքայութիւն պիտի երթան և աշխարհիս մէջ Քրիստոսի և անոր աշակերտացը հետ հաղորդուելու ալ պատրաստ են : Ասիկայ շատ վտանգաւոր սխալմունք մըն է, և կրնայ ըլլալ որ ծայրը յաւիտենական մահուան հասնի վերջապէս : Ուղիղ հաւատոյ դաւանութիւնը թէպէտ շատ հարկաւոր ու երևելի բան է, սակայն ինքնին բաւական պատրաստութիւն մը չէ : Արդ՝ հետևեալ խնդիրները կ'առաջարկեմ, Տէրօջը սեղանին մօտենալ ուզողներուն օգնութիւն ընելու նպատակաւ՝ որ Պօղոս առաքեալին ըսած անձնաքննութիւնը զգուշութեամբ կատարեն :

1 . Ար զգաս յանցաւոր ու դատապարտեալ մեղաւոր ըլլալդ . կը տեսնե՞ս սրտիդ խիստ ապականեալ ըլլալը : Աս զգացումներն էին Պօղոս առաքեալը աս խօսքերը ընելու շարժողները . « Գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմինէս մէջ բարի բան մը չենակիր » : « Ի՞նչ խղճալի մարդ եմ ես . ո՛վ զիս պիտի ազատէ աս մահացու մար-

մինչև,, 12-ով . 1: . 18 . 24 : Քրիստոս ոչ թէ արդարները , հապա մեղաւորները ապաշխարութեան կանչելու եկաւ . և մինչևոր չզգաս կորսուած մեղաւոր ու ինքըզինքդ փրկելու բոլորովին անկարող ըլլալդ , պատրաստ չես կրնար ըլլալ զՔրիստոս յիշատակելու՝ իբրև քու փրկիչդ : Քանզի մինչևոր աս յանցաւոր ըլլալուդ զզացումը չունենաս , չես կրնար « որոշել Տէրոջը մարմնոյն » , խաչին վրայ մեղաց համար զո՛հ մատուցուիլ : Հաղորդութիւն առած ատենն ՚նիս՝ Տէրոջը մարմինը ան ատենը միայն որոշած կ'ըլլանք , երբոր հաւատքով և սիրով Քրիստոսի կը նայինք՝ յիշելով որ չարչարուելով և խաչին մահուամբը մեռնելով պատարագուեցաւ մեր մեղացը համար , և թէ ան պատարագն է մեր մի միայն քաւութիւնը :

2 . Ըղօթքով Աստուծոյ մօտենալու ատենդ , կամ անոր սուրբ խօսքը քննելու և կամ անոր ճշմարտութեան քարոզութիւնը մտիկ ընելու ատենդ Քրիստոս անհունապէս փառաւոր և պատուական կ'երևի՞ քեզի : Աստուած խոստացած է խոնարհներուն և սրտով կոտրածներուն հետն ըլլալու : Քրիստոս խոստացած է ինքըզինքը անանկ կերպով մը իր աշակերտացը յայտնելու , որ ան յայտնութենէն զուրկ է աշխարհս : Քրիստոս ընքըզինքը քեզի կը յայտնէ՞ իբրև լոյս մտացդ , խա-

ղաղութիւն խղճիդ, և ցնծութիւն ու ակօսրտիդ : Ասոր փորձը առած են ամէն անոնք որոնք կը սիրեն զՔրիստոս՝ և ան ալ խաչը ելած :

3 . “Երբի մարդովը Աստուծոյ օրէնքին կը հաւնիս” : Փափաքանօք Սուրբ Գրքը կը սորվիս զգալով անոր յաւիտենական կենաց խօսքերը ըլլալը : Չկրնար ըլլալ որ մէկ մարդ մը զԱստուծոյ սիրէ, ու անոր խօսքը չսիրէ : Եւ ան որ Սուրբ Գրոց վրայ սէր չունի, անոք հեղինակին վրայ ալ սէր չկրնար ունենալ :

4 . Եւ իսարհս և աշխարհիս մէջն եղած բաները ճիշդ Աստուծոյ խօսքին նկարագրածին պէս կ'երևի՞ն աչքիդ : Անոր պատուոյն՝ հարստութեան և նախատանացը վրայ Աստուածաշունչը ինչ համարում որ ունի, դուն ալ նոյն համարումը ունիս : Կրնաս Դաւիթին հետ մէկտեղ աս խօսքը ըսել, թէ “Ամէն բանի վրայով պատուիրած քու բոլոր հրամաններդ ուղիղ կը համարիմ” : Սաղմ. ԸԺԺ. 128 : Թէ որ Աստուծոյ թըշնամին եզող աշխարհիս վրայ՝ Աստուածաշունչին ունեցած համարումը չունիս, խաչեալ Փրկիչը քուկդ չէ, և արժանի չես զինքը յիշատակելու :

5 . Կը սիրէս Աստուծոյ ժողովուրդը :
 Աստուած ընտրեալ ժողովուրդ մը ունի աշ-
 խարհիս վրայ , հագեոր՝ զինքը և անոր խօս-
 քը սիրող ու աշխարհէս բաժնուած : Ան-
 կեղծութեամբ կը սիրէս անոնց հետ ըն-
 կերութիւն ընելը և անոնց հետ խօսակցի-
 լը : Ա՛ռզէ՛ս անոնց հետ մէկ ըլլալ՝ աւել-
 լի աղէկ սեպելով “ Աստուծոյ ժողովուրդին
 հետ չարչարուիլ , քան թէ մեղաց ժամա-
 նակաւոր զուարճութիւնը վայելել ” : Աս
 խորհուրդը ոչ միայն Քրիստոսի հետ հա-
 զորդութիւն ընելու համար է , այլև ա-
 նոր ժողովուրդին հետ . և թէոր սրտանց
 և անկեղծութեամբ չես սիրեր զանոնք ,
 պատրաստ չես աս սեղանին մօտենալու :

6 . Բէտարանին ցուցուցած փրկութիւնը
 շնորհքով՝ ձրի և վերին շնորհքով է : Սըր-
 տանց կը հաւնին աս փրկութեան ճամբուն .
 կը զգան որ զանկէա քարոզողին փառք է
 ան , և քեզի՝ մեղաւորիդ ալ շատ յարմար :
 Աս բանին մէջ աղէկ քննէ ինքրզինքդ :
 Թէոր քու ըրած բարի գործքերուդ վրայ
 յոյս մը ունիս , թէոր սրտանց չես հաւ-
 նիր շնորհքով եղած փրկութեանը՝ զգա-
 լով թէ քեզի պէս մեղաւոր մը՝ միայն ա-
 անանկ ճամբով մը կարող է փրկուիլ ,
 կամ թէոր հունաւոր էակի մը՝ օգնու-
 թեանք կը նայիս , մի՛ մօտենար Քրիստոսի

սեղանին : Ան միայն երէն յուսացողներուն փրկիչն է, ոչ թէ ուրիշի վրայ յոյս ընողներուն :

7 . Վիտցուած քրիստոնէական պարտուց բոլորն ալ շարունակ կը կատարեն : Քրիստոսի հետևողները “հոգ տանելու են որ բարի գործքեր ընելու վրայ ըլլան” : Տե՛ս . Վ . 8 : Մարդասէր և բարերար ըլլալու են՝ ուրիշներուն թէ՛ մարմնաւոր և թէ՛ հոգեւոր օգուտը փնտռելով : “Իրենց լոյսը փայլելու է մարդոց առջևը” : Վրէժխնդրութեան ոգի ունեցողները, կամ անպարկեշտ ու պիղծ խօսքեր ընողները, և կամ ինչևիցէ մեղաց ինքրզինքնին տուողները իրաւունք չունին Տէրոջը սեղանին մօտենալու : Ամէն մեղքի դէմ կը պատերազմի՞ս, և խիստ շատ կը փափաքի՞ս անոր պէս սուրբ ըլլալու : Աղօթասէր ես . աղօթքը ոչ միայն քրիստոնէական պարտք, այլ նաև մեծ ու անզին շնորհք կը սեպէ՞ս : Արնա՞ս ներել քու թշնամիներուդ, և քեզի փնաս հասցընողներուն համար աղօթք ընել : Ար փափաքի՞ս և կ'աշխատի՞ս քեզի հետ հաղորդակցութիւն ունեցողներուն փրկութեանը համար : Աս բանին վրայ Պօղոս առաքեալին ունեցած զգացումներէն կայ քովդ, որ ըսաւ . “Ես ինքս կը խնդրէի նզոված ըլլալ Քրիստոսէն՝ իմ մարմնոյ կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս համար” : Զեռով . Թ . 3 : Քրիստոսինը եղողները կ'աշ

խատին և աղօթք կ'ընեն որ անոր թագաւորութիւնը գայ . այսինքն՝ անոր աւետարանը բոլոր աշխարհք տարածուի :

8 . Ի՞նչ է կեանքիդ մեծ և զլիաւոր նպատակը : Աշխարհային մարդոց ամենէն շատ սիրած բաները աշխարհային բաներ են . և ուստի աչքերնուն ամենէն փափաքելի երեցած աշխարհային բաները ձեռք ձգելու համար կ'ասլրին անոնք : Ոմանք հարրտութեան ետեւէ են , ոմանք հեշտութեանց , ոմանք պատուոյ , ոմանք ալ ուսման . ասոնց ամէնն ալ նոյն օրինակ աշխարհասէր են : Բայց ճշմարտապէս քրիստոսի աշակերտն եղողը ասանկ չէ : Ան Ատուծ մէ ծնած է , և իր փնտռածը Ատուածային բաներ են : Իր նպատակը Ատուածային մարդասիրութեամբ իր օրերը անցունելով՝ Ատուծոյ փառքին համար ասլրիլ է : Անոր՝ « աւելի երանելի է տալը՝ քան թէ առնելը » : Գործ . Ի . 35 : Թէ որ դուն ալ ճշմարիտ քրիստոնեայ ես , սիրտդ կը վկայէ որ զքրիստոս և անոր եկեղեցին կը սիրես , և ոչ թէ քու անձնասիրութիւնդ յագեցրնելու կը նայիս , հապա անոր անունը փառաւորելու համար կ'ասլրիս :

9 . Ի՞վերջոյ՝ հաղորդութեան գալէդ առաջ հարցուր դուն քեզի , թէ « Մի՞թէ շնորհքով կ'աճի՞մ ես : Մի՞ հարցընէր թէ

առաջուրնէ լաւագոյն կ'երևի՞մ ինքրդինքիս & ֆանդի քրիստոնեան որչափ որ սրբութիւնով աճի, այնչափ կը զզուի իր սրտին ապականութիւններէն: Հապաաս հարցուր թէ «Ետիս եղած բաները մոռնալով՝ առջև եղած բաներուն ետեւէն կերթամ, միշտ ջանալով ֆրիստոսի գիտութեանը մէջ և բոլոր քրիստոնեական շնորհաց մէջ յառաջ երևալու»: Ճշմարիտ քրիստոնէին երևելի հանգամանքն է շնորհքով աճիլը: Քրիստոնեան թէպէտ կը սրբանայ, բայց ըստ մասին: Անոր հաւատքը՝ յոյսը՝ սէրը և համբերութիւնը ու ամէն քրիստոնեական շնորհքները սկար կ'ըլլան առջի բերանը, բայց օրըստօրէ կը զօրանան: Հոգևոր կէանք եղած տեղը աճողն ալ կ'ըլլայ: Աստի թէ որ ինքրդինքդ քննելէդ ետե՛քրիստոնեութեան մէջ յառաջագիմութիւն ընել մը չես տեսներ վրայ, բոլորովին անպատրաստ ես Տէրոջը սեղանին մօտենալու:

Եւ փորձերը քու վրայ ընելով թէորասանկ ինքրդինքդ քննելէդ ետե՛քու զուն քեզ անպատրաստ գտնես, չես կրնար ան հացէն ուտել ու ան դաւաթէն խմել՝ առանց քու անձիդ դատապարտութիւնն ալ մէկտեղ ուտելու և խմելու, մինչևոր չըզգջաս բոլոր քու մեղքերուդ վրայ, և իբրև կորսուած մեղաւոր հաշտութիւն չգրտես Աստուծոյ հետ: Ա՛ր եկեղեցիէն կ'ըլլաս՝ եղիբ, թէոր քու մեղաւոր ըլլալդ չես զգար, թէոր ֆրիստոս փառաւոր ու պատուական չերևիր քեզի, թէոր Աս-

տուծոյ խօսքը քու բերկրութիւնդ չէ, թէ որ աշխարհքը կը սիրես ու Աստուծոյ ժողովուրդը չես սիրեր, թէ որ սրտանց չես հաւնիր չրի շորհոյ եղած փրկութեանը՝ ըզգալով թէ միայն անանկ ճամբով մը կրնայ քեզի պէս մեղաւորը փրկուիլ, թէ որ «բարի գործքերու նախանձաւոր», չես և քրիստոնէական պարտքերդ կատարելու և շնորհքով աճելու ջանք չունիս, զիտցած ըլլաս որ հարսնիքի լաթ հագած չես, և երբոր հարսնիքին տէրը հարսնետոնները տեսնելու մտնէ, քեզ դուրս պիտի ընէ: Ասխորհուրդին նպատակներուն նայելով ամենեւին յարմարութիւն մը չկայ վրաց անոր մերձենալու: Անոր նպատակը աստուծոյ Փրկիչ մը յիշատակել է: Բայց մինչևոր յանցաւոր ըլլալդ չզգաս, անանկ Փրկիչի մը կարօտ ըլլալդ ալ չես զգար. և ինտո՞ր կրնաս անոր մահը յիշատակել առանց կեղծաւորութեան: Անոր նպատակը միութեան և եղբայրական սիրոյ կապ մը ըլլալ է. բայց ասանկ սէր չկայ քու սրտիդ մէջ: Ան Գրիստոսի աշակերտացը վայելելու երանութեանը մէկ գրան է, բայց ան երանութեանը պատրաստութիւն չունիս բնաւ: Ուստի յոյս մ'ունենար որ աս խորհուրդը քեզի հոգևոր օգուտ մը կրնայ ընծայել, մինչևոր անոր մասնակից ըլլալու համար պէտք եղած հանգամանքները չունենաս Աստուծոյ շնորհքը:

Իսկ թէ որ աս քննութիւնը ընելէդ ետև՝ Աստուծոյ հետ ճշմարտապէս հաշտուած ըլլալուդ բաւական ապացոյց գտնես վր-

բաղ, ան ատենը խաղաղութեամբ և ու-
 րախութեամբ դնա Աստուծոյ հետ ըրած
 ուխտդ նորոգելու և քու Փրկչիդ ցուցուցած
 սէրը յիշատակելու : Ան ատենը Քրիստոս
 քու հետդ կ'ըլլայ իր սեղանին մօտեցած ա-
 տենդ : Ան սեղանը քեզի հոգևոր կերակուրի
 սեղան կ'ըլլայ . ան մէկ միջոց մը կ'ըլլայ քու
 ունեցած բոլոր շնորհքներդ աճեցունելու , և
 աւելի բարձր խորհուրդներ մտքիդ մէջը ծա-
 գեցունելու Քրիստոսի վրայ : Եւ ան ատե-
 նը աս հաղորդութիւնը ընելէդ ետև կրկին
 քու գործքերուդ ձեռք զարկած ատենդ ե-
 ոանդուն փափաք և հաստատուն դիտաւո-
 րութիւն կ'ունենաս ամէն բան ան քեզ սի-
 րողին և իր անձը քեզի համար տուողին փառ-
 քին համար ընելու :

Որո՞նց հաղորդու-թիւն ասալու է էկեղեցին :

ՊՕՂՈՍ առաքեալ յայտնապէս կը յանդիմանէ Կորնթացւոց եկեղեցին՝ իրենց մէջ մտած ան անկարգութիւններուն համար, որոնցմով Տէրունական ընթրիքը ըստ արժանւոյն չէր կատարուեր : Ուստի աս խորհուրդին սահմանադրուելու սկիզբը և նպատակը կը դնէ առջևնին, որ տեսնեն թէ ինչ կերպով կատարելու են զանհիկայ : Արդ՝ ասկէ յայտնի է որ ամէն եկեղեցի մեծ պարտքի տակ է ձեռքէն եկած զգուշութիւնները ընելու անարժան մարդու մը հաղորդութիւն չտալու համար : Աս պարտականութիւնը կատարելու համար եկեղեցին սա գլխաւոր և ամենապարզ կանոնը բռնելու է . որ է՝ զանոնք Ռայն հաղորդական անդամ ընդունել, որոնք ճշմարտապէս Քրիստոսի աշակերտները ըլլանաւն Բաւական Վայոթիւն հո-րան :

Ի հաստատութիւն աս կանոնին Սուրբ Գրոց վրայ հիմնեալ խորհրդածութիւններէն մէկ քանին հոս դնենք :

1 . Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն
եղողները ըսելով՝ անոնք կ'իմանանք , որոնք
“ Հոգիէն ծնած ” են , “ մեռելներէն ողջն-
ցած ” են , “ մարմինին պէս չեն երթար՝
հապա հոգիին պէս ” , և կը հնազանդին
Քրիստոսի պատուէրներուն ու ճշմարտու-
թիւնը սիրով կ'ընդունին :

Փրկիչն մեր հաւատացող շրեաներուն ը-
սաւ որ՝ “ Թէ որ դուք իմ խօսքիս մէջը կե-
նաք , ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլ-
լաք ” : Յովհ . Ը . 31 : Արով ըսել ուզեց
Թէ կան անանկներ ալ որ սուտ աշակերտ-
ներ են , և իրաւունք չունին աշակերտաց
կարգը սեպուելու : Ան ատենը իմ աշա-
կերտներս կ'ըլլաք , երբ որ յեղե դաստիարակ
Բաներս ընէ : Ասկէ յայտնապէս կ'երևի որ
Քրիստոսի պատուիրանքներուն չհնազանդող-
ները , ինչ դաւանութիւն որ կ'ընեն Թող-
ընեն , անոր աշակերտները սեպուելու չեն .
և ուստի մենք ալ զանոնք իբրև Քրիստո-
սի աշակերտ ընդունելու չենք :

2 . Սուրբ Գիւրջը յայտնապէս կը սոր-
վեցընէ Թէ եկեղեցիին պարտքն է իրմէ
դուրս հանել ամէն անոնք , որ Թէ՛ շար-
տով և Թէ շարդասպետութեամբ կը ցուցընեն
Թէ Քրիստոսի ճշմարիտ աշակերտները չեն .
ասկէ ալ կը հետևի որ անանկ մարդիկը
իրեն հետ խառնելու չէ :

« Հերձուածող մարդէն » առաջին ու երկ-
 րորդ անգամ խրատելէն ետե ետ քաշուէ » :
 Տե՛ս . Գ . 10 : « Կ'աղաչեմ ձեզի եղբայր-
 ներ , որ դիտէք անանկերը՝ որոնք ձեր սորված
 վարդապետութենէն դուրս հերձուածողու-
 թիւններ ու գայթակղութիւններ կ'ընեն .
 և անոնցից ես կ'եցէ : Հոով . Ժ . 17 :
 Թէ որ եկեղեցին աւետարանին ողջամիտ վար-
 դապետութիւններուն հակառակ դտած մար-
 դիկը իրմէ հեռու պահելու է , ասկէ աս-
 կը հետեի հարկաւ՝ որ ան ողջամիտ վար-
 դապետութիւնները ընդունողները միայն իր
 ծոցը ընդունելու է : Աս ալ կը հասկըցուի
 ասկէ որ հաղորդուող մարդը աւետարա-
 նին վարդապետութիւններուն վրայ տեղե-
 կութիւն ունենալու է , և զանոնք սրտանց
 ընդունած ըլլալու է : Մէկ մարդ մը ճշ-
 մարտութիւնը չկրնար ընդունիլ , մինչև որ
 ինչ բան ըլլալը չհասկնայ : Եւ եկեղեցին
 ճշմարտութիւնը չիտարող մարդոցմով լեցունե-
 լը՝ աւետարանին դէմ ըլլալուն կողմանէ՝
 եկեղեցին ճշմարտութեան հակառակ եղող
 մարդոցմով լեցունելէն վար չմնար :

Աոյնչափ կամ առաւել ևս սաստիկ պատ-
 ուեր կայ եկեղեցիին որ անպարկեշտ և անա-
 ռակ վարք ունեցող մարդիկ չընդունի իր
 մէջը : « Գրեցի ձեզի թուղթին մէջ , որ
 պոռնիկներուն հետ չխառնուիք : Եւ գրածս
 չէ թէ աս աշխարհիս պոռնիկներուն հետ ,
 կամ ազահներուն հետ , կամ յախշա-
 կողներուն հետ , կամ կռապաշտներուն
 հետ , հապա թէ չէ՝ պէտք էր որ դուք

աշխարհէս դուրս ելլելիք : Բայց հիմա ձե-
զի գրեցի չեառնուիլ , այսինքն՝ թէոր մէ-
կը եղբայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ ,
կամ ազահ , կամ կռապաշտ , կամ նա-
խատող , կամ գինով , կամ յափշտակող ,
անանկին հետ հաց ալ չուտել » : Ե. Կորնթ .
Ե . 9—11 : Աս համարներուն մէջ վեց մեղք
կայ որոշ յիշուած . պոռնկութիւն , ազա-
հութիւն , կռապաշտութիւն , նախատինք
ընել , գինովութիւն և յափշտակութիւն :
Ասոնցմէ մէկը ունեցողը , թէև եկեղե-
ցւոյ անդամ ըլլայ և կանոնաւոր հաղորդակ-
ցութիւն ունենայ անոր հետ , անմիջապէս
կտրելու է զանիկա հաւատացելոց հետ ու-
նեցած միաբանութենէն , և մինչևանգամ ան
ընկերական հաղորդակցութենէն՝ որն որ
հարկաւ ընելու ենք հեթանոսաց հետ :

Արդ՝ թէոր բոլոր ապահները՝ նախա-
տողները յափշտակողները՝ գինեմոլները և
պոռնիկները առաջուց անգամ մը ընդուն-
ուած ալ ըլլալնէն ետև՝ կտրուելու են ե-
կեղեցիէն , ալ ասկէ յայտնապէս չըհաս-
կրցուիր որ ասանկ մեղքեր գործողները ա-
մենեկին եկեղեցւոյ անդամ ընդունուելու չեն ,
և երբէք Տէրօջ սեղանին մօտենալ չըլլար
անոնց :

Անչ ցաւալի բան է որ աս սուրբ հա-
ղորդութիւնը չնչին և անարգ բանի մը պէս
կուտան անանկ մարդոց որոնց սովորական
մեղքն եղած է գինեմոլութիւնը , կամ ա-
զահութիւնը կամ նախատինքը , կամ յա-
փշտակութիւնը կամ պոռնկութիւնը , կամ

անախօսութիւնը , և կամ ասոնց ամէնը մէկտեղ :

Թեպէտ վերոյիշեալ համարներուն մէջ աս մէկ քանի մեղքերը յիշուած են մասնաւորապէս , սակայն միայն ասոնք հասկընալու չենք , հապա ուրիշ ամէն տեսակ անառակութիւններն ու մեծ մեղքերն ալ մէկտեղ իմանալու ենք : Ասոր ասանկ հասկըցուիլը , կ'երևի նախընթաց համարներէն , ուր կը հրամայէ առաքեալը եկեղեցիին՝ որ ան հին Խմորը մաքրէ վրայէն . 8 համարին մէջ ալ խմորին նշանակութիւնը կը մեկնէ , որ է չարութիւն և անզգամութիւն : Աւստի թէոր ասանկ պատուէր կայ եկեղեցիին՝ որ դուրս հանէ բոլոր չար ու անառակ մարդիկը , կամ որ նոյն է՝ ամէն անոնք որ վարքովսին կը ցուցնեն թէ Քրիստոսի ճշմարիտ և հնազանդ աշակերտները չեն , և « անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացը » չունին , ալ որչափ զգուշութիւն ընել պարտական է՝ անանկ մարդիկը աս սուրբ սեղանին հաղորդական անզամ չընդունելու համար :

3 . Եթէ փնտռենք նայինք թէ Սուրբ Գիրքը ինչ կը սորվեցընէ բրիստոնէից եկեղեցիին նպատակին վրայ , և անոր իր անդամներուն ընծայելու օգուտներուն վրայ , ան ատենը յայտնի կը տեսնենք որ վերը գրած կանոնէս զատ ուրիշ կանոն չենք կրնար հաստատել Սուրբ Գրոց վկայութեամբ :

Քրիստոնէից եկեղեցիին նպատակն ու
օգուտները դիւրաւ կրնանք սորվիլ նոյն իսկ
Քրիստոսի խօսքերէն և առաքելոց ձեռօքը
առաջին քրիստոնէից եկեղեցիներուն գրուած
մէկ քանի թուղթերէն, որոնք յայսինա-
պէս աս նպատակաւ գրուած են, որ ա-
նոնցմով հաւատոյ վերաբերեալ գլխաւոր
վարդապետութիւնները սորվելէն զատ՝ ա-
ղէկ տեսնեն նաև իբրև եկեղեցի ինչ պար-
տականութիւններ ունենալին և քրիստո-
նէական ընկերութենէն ինչ օգուտներ
յստաջ գալը :

Եւ թուղթերէն և Սուրբ Գրոց ուրիշ
մասերէն կը սորվինք որ քրիստոնէից եկե-
ղեցւոյն և կամ հաւատացելոց ընկերու-
թեանը նպատակը ,

Ն. օ Աստուած խառատորէ Է՛ ինչպէս աշխարհ
միտ եւ շար Տարբոց առջեւը Ճշմարիտ և կէս
դանի քրիստոնէական ջոպընէլով :

“Դուք էք երկրի աղը . հապա թէ-
որ աղը իր համը կորսնցունէ , ինքը
ինչով պիտի ազուի . անկէ ետև քանի մը
չգար , միայն թէ դուրս ձգուելու և մար-
դոց ոտքին տակը կոխուելու : Դուք էք աշ-
խարհի լոյսը . քաղաք մը՝ որ լեռան վրայ
կեցած է , չկրնար պահուիլ : Ու ճրագը
չեն վառեր և դներ գրուանի տակ , հա-
պա աշտանակի վրայ , և լոյս կուտայ բո-
լոր տանը մէջ եղողներուն : Անանկ թող
լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին , որ տես-
նեն ձեր բարի գործքերը , ու փառաւորեն
ձեր շնորհ՝ որ երկինքն է , : Մատթ . 5 :

13—16 : “ Չեր վարձուները հեթանոսաց մէջ
բարի պահելով , որ ինչ բանով որ ձեզ
չարագործներու պէս կը բամբասեն , ձեր
բարի գործքերը տեսնելով՝ փառաւորեն
զԱստուած այցելութեան օրը , ” : Բ. Պե .
Բ . 12 : “ Որ ըլլա՞ք ամբիժ ու անարատ՝
Աստուծոյ որդիներ առանց մեղազբանքի՝ կա-
մակոր ու խոտորեալ ազգին մէջ , որոնց
մէջը զուք լուսաւորներու պէս կը փայլիք
աշխարհիս մէջը ” : Փիլիպ . Բ . 15 :

Բ . Կենաց խօսքը ամուռ բռնել և տա-
րածել է . այսինքն քրիստոնէական ողջա-
միտ վարդապետութիւնը մաքուր պահել և
ուրիշներուն ալ հաղորդել է : “ Որ զուք
հաստատուն կը կենաք մէկ հողիով , ու մէկ
շունչով պատերազմակից կ'ըլլաք աւետա-
րանին հաւատքին համար , ” : Փիլիպ . Բ . 27 :
“ Գացէ՛ք բոլոր աշխարհ , ու աւետարանը
բարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածներուն , ” :
Մարկ . Ժ . 16 : Աս պատուէրը ընդհան-
րական եկեղեցիին տրուած է , սակայն ի
հարկէ ամէն եկեղեցի և ամէն քրիստոն-
եայ աշխատելու է որ աս բանը կատարուի ,
և ուստի ամէն քրիստոնեայ պարտական է
աս պատուէրը կատարելու համար որեւիցէ
կերպով աշխատելու :

Վ . Վրիստոնեաներուն եկեղեցի կազ-
մուելուն նպատակը աս է , որ քրիստոնէ-
ական միութիւնով՝ սրբութիւնով և չնորհ-
քով աճին , ու նեղութեան մէջ մէկգմէկ
մխիթարեն , և իրարու շինութեան համար
աշխատին :

«Կոր համար մէկզմէկ մխիթարեցէք,
 և իրարու շինութիւն տուէք, ինչպէս որ
 կ'ընէք ալ» : Ե. Թե. . Ե. . 11 : «Պար-
 տինք ամէն ատեն Աստուծոյ գոհանալ ձե-
 զի համար՝ եղբայրներ, ինտոր որ կը վայ-
 լէ . քանզի ձեր հաւատքը շատ աճելու վը-
 րայ է, և ձեր ամէն մէկուն սէրը իրա-
 ըու վրայ կը շատնայ . անանկ որ մենք ալ
 ձեզմով կը պարծենանք Աստուծոյ եկեղե-
 ցիներուն մէջը՝ ձեր համբերութեանը ու հա-
 լատքին համար ձեր բոլոր հալածանքներուն
 ու նեղութիւններուն մէջ, որոնց որ դուք
 կը համբերէք» : Ե. Թե. . Ե. . 3, 4 : «Բայց
 եղբայրսիրութեան վրայով պէտք չէ ձեզի բան
 գրել . ինչու որ դուք ինքնիրեննիդ Աստուծ-
 մէ սորված էք մէկզմէկ սիրել . և իրաւ
 ատ բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի
 մէջ եղող ամէն եղբայրներուն» : Ե.
 Թե. . Դ. . 9, 10 : «Թէոր Բրիստոսի
 հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բա-
 ները փնտռեցէ՛ք, ուր որ Բրիստոս կը նըս-
 տի Աստուծոյ աջ կողմը : Վերի բաները
 մտածեցէք, չէ թէ աս երկրիս վրայիննե-
 րը : Ինչու որ դուք մեռաք, ու ձեր կեան-
 քը պահուած է Աստուծոյ քովը Բրիստո-
 սի հետ : Երբոր Բրիստոս՝ մեր կեանքը յայտ-
 նուի, ան ատենը դուք ալ անոր հետ փառ-
 քով պիտի յայտնուիք : Ուստի ձեր երկ-
 րաւոր անդամները սպաննեցէ՛ք . պոռնկու-
 թիւնը, պղծութիւնը, անսանձ կիրքը, չար
 ցանկութիւնը, ու ազահութիւնը՝ որ կուսպաշ-
 տութիւն է» : Կող. . Գ. . 1—5 : «Իրարու

վրայ միևնոյն խորհուրդը ունեցէք . ամբար-
տաւանութիւն մի՛ ընէք , հապա խոնարհ-
ներուն հետ խոնարհեցէք » : Հոով . մ .
16 : Աս խօսքերը յայտնի կը ցուցնեն թէ
ինչ պարտականութիւններ ունին եկեղեցւոյ
անդամները իրարու :

7 . Քրիստոնէից եկեղեցւոյն նպատակը
տկարներուն զօրութիւն տալ է . այսինքն
հաւատքի մէջ տկար եղողներուն քաջալե-
րութիւն տալ և օգնութիւն ընել է :

« Չեզիկ՛ աղաչէնք եղբայրներ՝ անկարգ վար-
մունք ունեցողները խրատեցէ՛ք , վատասիրտ-
ները մխիթարեցէ՛ք , տկարներուն ձեռնտու
եղիք , ամենուն ալ երկայնամիտ եղիք » : Ե .
Թե . Ե . 14 : « Պէտք է մեզի՛ որ կա-
րող ենք , տկարներուն տկարութիւնը վեր-
ցունել » : Հոով . Ժ . 1 : « Հաւատքի մէջ
տկար եղողը ընդունեցէք՝ չէ թէ տարա-
կուսական որոշմունքներով » : Հոով . Ժ .
1 :

Մը՛ եկեղեցւոյ՝ մը անդամները մինչև որ ան-
կեղծութեամբ և բոլորով սրտիւ ինքրզինքնին
Քրիստոսի և անոր եկեղեցիին շնուիրեն ,
չեն կրնար աս պարտականութիւններնին
կատարել և աս առջևնին դրուած նպա-
տակներուն հասնիլ : Շնորհք չունեցող մար-
դը չկրնար ալ շնորհքով աճիլ . և ուստի
անանկ մէկը հաւատացելոց հետ մէկտեղ
խառնելու չէ , որոնք մէկգմէկու շնորհքով
աճմանը պատճառ ըլլալու համար ընկերա-
ցած են : Գիտութեամբ ասանկ մէկը է .

կեղեցիին մէջ ընդունելը Քրիստոս կրկին
 էր թշնաեացը մասնել է : Ան որ ինքը
 զօրութիւն չունի, ինտոր կրնայ եղբայրնե-
 րը զօրացունել : Ան որ Քրիստոսի հետ
 միացած չէ և բուն իր վրայ անկեղծ քը-
 րիստոնէական սէր չկայ, ինտոր կրնայ եղ-
 բայրական սէր զարթուցանել ուրիշներուն
 սրտին մէջ : Եւ ստանկ՝ եթէ բոլոր վերո-
 յիշեալ պարագաները քննենք նայինք,
 յայտնի կը տեսնենք որ միայն անոնք կըր-
 նան վայելել եկեղեցւոյ օգուտները և կա-
 տարել անոր վրայ եղած պարտքերը, ու
 ընդ իրօք միացած են Քրիստոսի հետ հա-
 ւատքով և ամէն բանէն աւելի կը սիրեն
 զինքը, և հրաժարած են իրաւարին բոլոր
 դործքերէն և աշխարհիս ծառայելէն : Ա-
 հա այսպէս Սուրբ Գիորքը կատարեցապէս
 կը յայտնէ թէ եկեղեցին որոնց հաղորդու-
 թիւն տալու է :

4. Ըստ կանոնիս հաստատութիւն
 կու տայ նաև մեր Փրկչին տուած ան բա-
 յայայտ պատուէրը : “Սուրբ բանը շունե-
 րուն մի՛ տաք, և ձեր մարգարիտները խո-
 ղերուն առջևը մի՛ ձգէք, որ ոտքերնուն
 տակը չկոխկռտեն զանոնք, ալ դառնան ձեզ
 փարատեն, , : Մատթ . 1 : 6 :

Ըստ խօսքը՝ աւետարանին սուրբ ճշմար-
 տութիւնները մեծ մեղաւորներուն մի՛ քա-
 ռոզէք ըսել չըլլալը յայտնի է . քանզի ու-
 ըիչ տեղեք պատուէր կայ որ անանկներուն

ալ քարոզէնք : Աւետարանը քարոզելու
 պարտական էնք ամենայն արարածոց , թէ
 շքեից՝ թէ հեթանոսաց թէ կուսակաշտնե-
 րուն և թէ մեղաւորաց գլուխին : Եւ թէ-
 որ աւետարանը հաւատարմութեամբ քա-
 ըողուի , շատ անգամ յետին մեղաւորնե-
 րը և ամենէն համարձակ հայհոյիչներն ան-
 գամ կը յաղթահարէ : Այլ աս ըսել է ,
 թէ մի տաք եկեղեցիին առանձնաշնորհու-
 թիւնները՝ անոր խորհուրդները՝ սուրբ բա-
 ները անանկ մարդոց , որոնք ան բաները
 շնորհքով և սրբութիւնով աճելու համար
 գործածելուն տեղը՝ մեզք դործելու հա-
 մարձակութիւն առնելու համար պիտի գոր-
 ծածեն : Քրիստոսի մարմնոյն հաղորդութիւ-
 նը անանկ մարդոց առջևը դնելը խոզերուն
 առջին մարգարիտ թափել է : Բայց աւանդ ,
 որ քրիստոնէից եկեղեցւոյն մեծ մասը անոր
 հակառակը կը գործէ հիմա : Աւանդ , որ բազ-
 մաթիւ մարդիկ գործած մեղքերնին քաւելու
 համար հաղորդութիւն կ'առնեն : Ա'երթան
 Քրիստոսի սեղանին մասնակից կ'ըլլան խը-
 ոովեալ խիղձերնին հանդարտեցնելու հա-
 մար , ու անկէ ետե նորէն կը սկսին իրենց
 առջի աշխարհային մեղանշական ընթացքը
 վարել : Եւ երբոր կրկին մեղքերնուն հաշ-
 ուագիրը լինայ , հաղորդութիւն մը առած-
 նուն պէս կարծես թէ ամէնը մէկէն կը
 սրբեն կը սկրթեն մէկդի կը դնեն :
 Այսպէս աւետարանին շնորհաց մարդա-
 րիտները ոտքերնուն տակը կոխկուտե-
 լով կ'երթան , չզիանալով որ բաք

կութիւն կը դիզեն վրանին՝ ամբարիշտներուն վրան հասնելու բարկութեան և դատապարտութեան օրուանը համար : Ան է կեղեցին որ ասանկ մարդիկը իրեն հաղորդական անդամ կ'ընդունի , թող յոյս չունենայ Աստուծոյ օրհնութիւն առնելու : Երբ որ ինք Անոր խորհուրդները անպատիւ ընեն ու պղծէ , Ան ալ զինքը կ'անարգէ և « ուժով մոլորութիւն մը կը խրկէ վրան , որ ստութեան հաւատայ և դատապարտուի » :

5 . Ղառիս սկիզբը խօսեցանք աս խորհուրդին նպատակներուն վրայ . աս ալ ցուցուցինք թէ մարդ մը ինչ բաներով իր անձը քննելու է Տէրոջը սեղանին մօտենալու համար : Եկեղեցին մէկը հաղորդական անդամ ընդունելու համար բաւական ապացոյց գտնելու է անոր վրայ՝ աս բանը հաստատելու , թէ անոր սիրտը կը յարմարի հաղորդութեան խորհուրդին աս նպատակներուն . թէ Տէրոջը սեղանին պիտի մօտենայ խոնարհութեամբ և երախտագիտութեամբ Քրիստոսի մահը յիշատակելով , և Քրիստոսի աշակերտներուն ճշմարիտ եղբայրական սէր ցուցնելով՝ ու հաստատուն կամք ու փափաք ունենալով Աստուծոյ շնորհքովը « ոչ թէ իրեն համար , այլ անոր համար ապրելու , որ մեռաւ իրեն համար ու նորէն յարութիւն առաւ » :
Բ . Կորնթ . Ե . 15 :

6 . Այնպէսգական պատմութեանց վրայ հիմնեալ շատ ուրիշ ապացուցական խորհուր-

դածութիւններ ալ կան, որոնցմէ կ'երեւի թէ որչափ օգտակար բան է ամենայն զգուշութեամբ աս խորհուրդը պաշտպանելը: Եկեղեցւոյ ասանկ ապականուելուն մեծ պատճառը աս զգուշութեան զանցաւութիւնն եղաւ: Հաղորդութիւնը աշխարհային մարդոց ալ տալով Քրիստոսի և առաքելոց թողուցած օրինակին և ուսմունքներուն հակառակ վարք ունեցող մարդոցմով լեցաւ եկեղեցին: Աս խորհուրդին ուղիղ նպատակներուն հասնելու ուշ չդնելով վերջապէս բանին գէշութիւնը ան աստիճան հասաւ, որ հաղորդութեան խորհուրդը մեղաւորաց խիղճը հանդարտեցընելու միջոց մը եղաւ. և աւանդ, Փրկչին մերոյ սահմանած խորհուրդը այնչափ խայտառակեցին, որ թէ ստախօսները՝ թէ շնացողները՝ թէ հայհոյիչները և թէ ո՛ր և իցէ տեսակ չարագործ մարդիկ մէկ ականջալուր խոստովանութիւնով մը և քահանան միջնորդ մեղաւորաց բռնելով մը ազատութիւն ունին հիմա Տէրօջը սեղանէն ուտելու:



Մէկ քանի առարկութիւններ կան որ շատ անգամ աս կանոնին դէմ կը բերեն , ուստի արժան կը սեպեմ հոս անոնց պատասխանները համառօտիւ շարել :

1 . Մարդ մարդու սիրտ չկրնար քննել . ապաուրեմն անհնար բան է որ եկեղեցին ստուգէ թէ աս մարդը ան սիրտը ունի՞ թէ չէ , և թէ ան հոգեւոր բնութեան տէրն է , որ միայն անով մարդս կ'արժանանայ Տէրոջը սեղանին մօտենալու :

Աս առարկութեանը սա պատասխանը կուտանք , թէ սուրբ աւետարանը երկու կանոն տուած է մարդու մը բարքը և Քրիստոսի եկեղեցիին անդամ ըլլալու յարմարութիւնը դատելու համար , որ անոնց երկուքովն ալ մարդու սիրտ չենք կրնար քննել :

Բ . “ Երեսնց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք ” : Աս կանոնը մեր Փրկիչն ինքը տուած է : Ան մարդուն վարքը որ Քրիստոսի պատուէրներուն դէմ կը տեսնենք , չենք կրնար անոր սիրտը Քրիստոսի հետ մէկ է ըսել :

Բ. Ու միայն վարքը աւետարանին համաձայն գալու է, հապա ուղիղ աւետարանական հաւատոյ դաւանութիւն ալ տալու է: «Սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու»: Հոով՝ Ժ. 10: «Զերձուածող մարդէն՝ առաջին ու երկրորդ անգամ՝ խրատելէն ետե ե՛տ քաշուէ»: Տե՛ս. Գ. 10: «Դիտէք անանկները՝ որ ձեր սորված վարդապետութենէն դուրս հերձուածողութիւններ ու գայթակղութիւններ կ'ընեն. և անոնցմէ ետ կեց' ը»: Հոով՝ Ժ. 9. 17: Միայն աս ուղիղ հաւատոյ դաւանութիւնն ու աւետարանին համաձայն վարքն է մէկ մարդու մը ճշմարիտ գրիստոնեայ ըլլալը չըլլալը որոշելու վկայութիւններնիս, ու մենք ալ ասկէ աւելի փնտռելու չենք:

Սակայն հաւատոյ դաւանութիւն ըսելով պարզապէս այսինչ այնինչ վարդապետութիւններուն ճշմարիտ ըլլալուն հաւանութիւն տալ ըսել չենք ուզեր: Սատանաներն ալ կրնան հաւանութիւն տալ աւետարանին վարդապետութիւններուն ճշմարիտ ըլլալուն, թէպէտե զանոնք ամէնն ալ յաւիտենական ատելութիւնով կ'ատեն: Հատ չար՝ ազահ և աշխարհասէր մարդիկ կան աւետարանին բոլոր վարդապետութիւնները ճշմարիտ սեպող, որ յայտնապէս կը ցուցրէն որտով անոնց չհնազանդելն/ն: Միայն ան դաւանութիւնն է ընդունելին, ու

րով քրիստոնեան ոչ միայն աւետարանին վարդապետութիւններուն ճշմարիտ ըլլալուն հաւանութիւն կու տայ, այլ նաև կը խոստովանի թէ բոլոր սրտով կ'ընդունի զանոնք, և «ներսի մարդուն նայելով Աստուծոյ օրէնքին կը հաւնի», և ինչպէս որ իր վարքը՝ անանկ ալ իր ներքին զգացումներն ու խորհուրդները անոր հնազանդեցունել է իր գործը: Առաքելոց փնտռածն ալ բոլոր սրբանոց հասարակ էր: Փիլիպպոս ըսաւ ներքինին, «Եւ որ բոլոր սրբովք կը հասարակս, կընաս մկրտուիլ»: «Սրտով հաւատալու է մէկը՝ որ արդարանայ»:

2. Ըստ առարկութիւնն ալ կ'ընեն, թէ աս կանոնով խոստովանած կ'ըլլանք որ տեսանելի եկեղեցիին մէջը ընդունածներնուս բոլորն ալ ճշմարտապէս Քրիստոսի մարմնոյն անդամներն են. այսինքն անոր անտեսանելի եկեղեցիին անդամներն են. և այսպէս հաստատած կ'ըլլանք թէ կատարելապէս մաքուր եկեղեցի մը ունինք, զուտ ցորեն, առանց հատ մը որոմ գտնուելու մէջը. քանզի ամէն մէկ ընդունածներնուս համար վճիռ կու տանք թէ ճշմարտապէս Քրիստոսի աշակերտն է:

Ըստ ալ աս պատասխանը կու տանք թէ մենք ատանկ բան խոստովանած չունինք, այլ ընդհակառակն ատանկ կը հաւատանք որ ամէն եկեղեցիի մէջ՝ թէև վերջին աստիճան զգուշութիւն պահուի, կրնայ ըլ

զալ որ « Քրիստոսի ամենեին չճանցած », անարժան մարդոցմէն ոմանք դանուին : Եւ ասիկա ալ ամենեին դէմ չդար Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ըլլալուն բաւական վկայութիւն տուողները միայն եկեղեցիին մէջ սունելու կանոնին : Եկեղեցին անսխալութիւն կանոնք վրան մարդու մը բնաւորութիւնը կը ընտելու ատենը : Որուն վըրայ որ Քրիստոսի ճշմարիտ աշակերտն ըլլալուն համոզիչ փաստ գտնէ, իր դուռնելը բաց են զանիկա ընդունելու . բայց և այնպէս դիտէ որ տասներկու առաքելոց մէջ Յուզա մը կար, որ քանի մը տարի ճշմարտապէս Քրիստոսի աշակերտ սեպուեցաւ, և իր եղբայրները մինչև վերջը ամենեին դէշ կասկած մը չունեցան անոր վըրայ : Աս նայն քանը ուրիշ տասներկուքի մը վրայ ալ կրնանք մտածել . անոնց ամէն մէկը զատ զատ դիտելով՝ Քրիստոսի աշակերտ կը գտնենք, և սակայն հաւաքականապէս առնելով՝ չենք կրնար ըսել թէ անհնար բան է որ ասոնց մէջը Յուզա մը գտնուի : Ըստ ուրիշ մարմնաւոր գործերու մէջ ալ մարդիկ աս նոյն կերպով գատուա՛ կ'ընեն : Օրինակի աղաղաւ՝ մէկը հազար ոսկի կ'առնէ տեղէ մը . ոսկիները առած ատենը մէկիկ մէկիկ կը քննէ կը նայի որ սուտ ստակ չըլլան . սակայն ասոնց ամէն մէկը առանց կասկածանաց ընդունելէն ետե՛ ճամարձակիր ասոնց մէջը սուտ ոսկի մը գտնողին բոլորը կու տամ ըսելու :

« Քանի որ եկեղեցին սխալական է և չը-

կրնար ալ մտրդուս սիրտը քննել, հնարա-
 ւոր է որ ինչպէս ուրիշ բաներու մէջ նոյն-
 պէս և առ բանին մէջ սխալի : Բայց առ
 իշ սխալելու են թակայութիւնը պատճառ մը
 չէ գլուշութիւն ընելու պարտականութիւնը
 բարբոխն գանց ընելու, այլ ընդհակառակն
 խժան մը ըլլաու է իրեն՝ աւելի մեծ ըզ-
 ցաշութիւն ընելու և անենայն ջանիք աշ-
 խատելու՝ որ չխաբուի : Թնայտին որով
 ցանելու թոյլաուութիւն սաղը թագաւորու-
 թիւն մը իրեն դէմ բաժնել է :

3 . Մ'կ առարկութիւննին ալ առ է
 թէ՛ առ ըսած կարանքնին պէտք կ'ըլլայ որ
 ամէն անգամ հաղորդութիւն ընելուս ե-
 կեղեցին բոլոր անգամները կրկին մէկիկ
 մէկիկ քննեմք նայինք թէ արժանաւոր են
 հաղորդութիւն առնելու :

Ի՞նչ առարկութիւնը բոլորովին անտեղի է :
 Մ'կ մտրդ մը մէկ մտթէմտթգակն խըն-
 դիր մը ո գրդ լուծելուն վրայ վստահ ըլ-
 լալէն ետն, ալ զանիկա ամից անգամ
 մը կամ տարին հեղ մը չլուծեր որ առա-
 ջին անգամ լուծածը շտակ մնայ : Առա-
 ջին լուծմանը վրայ կը մնայ, մինչևոր մէ-
 ջն սխալմանք մը ըլլալը ցուցուի : Նմանա-
 պէս եկեղեցին ալ եթէ անգամ մը մէկ
 մարդու մը իրեն հաղորդական անգամ ըլ-
 լալու արժանաւորութիւն ունենալուն հա-
 մարդի ո հաւատայ, ալ իր առջի հաւատ-
 քին վրայ կը մնայ, մինչևոր ան մարդուն

յայտնապէս այսինչ մեղքը դործելը և կամ
աւետարանին հակառակ ընթացք մը ունե-
նալը իմացութի և ան ատենը և կեղեցին կը
զիանայ խաբօ իլը, ու պարտք կ'ըլլայ իրեն
ան մարդէն և ա քաշուիլ :

4 . Մէյմն ալ սա աւարկութիւնը կ'ը-
նեն, թէ սա հաստատած սկզբունքներուս
նայելով՝ մարդիկ չափահաս մկրտելու ենք,
որ երբոր մկրտութիւն եկեղեցին բոլոր ար-
տօնութիւններուն ալ հաղորդ ըլլան . քան-
զի տղաք մկրտուած ժամանակին ան հան-
գամանքներէն մէկն ալ չունին, որ առանց
անոնց մ'ըզ չկրնար հաղորդութիւն առ-
նել ըսինք . և ուսի հարկ կ'ըլլայ որ մէկ
մարդու մը մկրտուելուն վրայ շատ ատեն
անցնելէն ետև հարցընենք փնտռենք իրմէն
աս հանգամանքները :

Ըսոր ալ սա պատասխանը ունինք, թէ
տղաք իրենց ծնողացը հաւատքովը կը մկրտ-
ուին : Այսք իրենց սղուն կողմէն ուխ-
տի կը մանեն Ղաաուծոյ հետ : Երբոր չափա-
հաս եղած ատենը իր ծնողացը հաւատքը
չունենայ և ան ուխտը ինք անձանք ըրած ի
պէս՝ իր վրան չառնէ, և թէոր ապաշ-
խարութեանը ու հաւատքով Քրիստոսի ճշշ-
մարիտ աշակերտներէն մէկը չըլլայ, ըսել
կ'ըլլայ որ իր մկրտութեան ուխտին մէջը
կենալ չուզելով՝ կ'ուրանայ զան իկա՞ :

(1) Ինչո՞ւ կամար և ինչ մարդ տղաք մկրտուելուն
վրայ հետ ճառ Մկրտութեան և վերստին
Ծննդեան, Երեւ 70—96 :

Եկեղեցին ալ իր կողմանէ պարտական կ'ըլլայ հաղորդութեան շնորհունիլ զինքը, պէտք եղած պատրաստութիւնները չունենալուն համար, թէպէտ աս ալ նայելու է որ մասնաւոր ինտիք տանելով և աղօթքով կարողանայ զանիկայ ետ դարձունել, և փրկարարութեան կենդանի հաւատոյ նշանները վերան տեսածին պէս հաղորդութեան ընդունիլ: Անիկայ եկեղեցւոյ անդամ է իր մկրտութիւնովը բայց անոր հաղորդութենէն զրկուած է՝ պէտք եղած քրիստոնէական որպիսութիւնները չունենալուն համար: Եկեղեցին մկրտութիւնով իրեն անդամ ընդունածներուն վրայ պարտական է քանի որ կը մեծնան, պահպանութիւն ընել, անոնց համար աղօթք ընել մասնաւորապէս, խրատել աղաչել և յանդիմանել, ու այսպէս ջանք ընել կատարելապէս զանոնք Քրիստոսի հնազանդեցընելու, որ կարող ըլլայ ուրախութեամբ ընդունիլ զիրենք իբրև կենդանի և ճշմարիտ անդամք Քրիստոսի մարմնոյն:

Եւկէ՛ ի զաս՝ չկայ եկեղեցի մը երբեք ասանկ հաւատք մը ունեցող՝ թէ միայն մկրտութիւնը ինչն է բաւական պատրաստութիւն է հաղորդութիւն առնելու: Քանի մը եկեղեցիներու մէջ խոստովանութիւնն ու արձակումը հաղորդութիւն առնելու պատրաստութիւն սեպուած է, և խոստովանանք չեղող արձակում չառնողին հաղորդ չեն տար, առանց մկրտուած ըլլալուն նայելու:



Ի վերջոյ՝ աս է հաստատածնիս, թէ

աս սուրբ խորհուրդը անանկ մատակարարուե-
 լու է, որ անով եկեղեցին որչափ մաքուր
 պահել որ հնարաւոր է ան աստիճան մաքուր
 պահուի: Աս բանն ալ միայն ան ատենը
 կրնայ ըլլալ, երբոր անոր մասնակից ըլլա-
 լու համար պէտք եղած պատրաստութիւն-
 ները շունեցողին հաղորդութիւն չտուի, և
 ունեցողին ալ զրկողութիւն չըլլայ: Աս կա-
 նոնը Աստուծոյ վախովը ամուր բռնող ե-
 կեղեցին միշտ զօրաւոր կ'ըլլայ. քանզի Աստ-
 ուած է անոր զօրութիւնը, և անոր կա-
 ըողութիւնովը բոլոր իր թշնամիները կը յաղ-
 թէ անշուշտ: Ար հալածուի՝ աշխարհային
 մարդոցմէ ատելութիւն և նախատինք կը կրէ,
 սակայն միշտ իր Փրկչին ձայնին մտիկ ընողը և
 միայն անոր սուրբ խօսքը իր ճամբուն անաջ-
 նորդ բռնողը ինչ վախ կրնայ ունենալ
 մարդոց ըրածներէն:




ՈՒՏ ԸՍԻ ԲԵՐԱՅՈՒ

1. Ո՞ր Տէր Յիսուս քեզ կը սիրեմ
Ինչուոր քաղցր է շատ քու սէրդ,
Եւ բարձր ձայնով ես ան կ'երգեմ
Որ իմացուին քու մեծ գործքերդ :
2. Լ՛յո՛ շատ քաղցր ես իմ հոգւոյս
Յոյս՝ վրկուծիւն և կեանք ինձի,
Անդին գոհարք եմ քովդ անարգ
Ոսկին ալ իբր ջնջին փոշի :
3. Տէր քու շնորհքդ սրտիս վերայ
Միշտ կեանք տուող հաս կը բուրէ,
Դեզ զօրաւոր է ցաւերու
Բոլոր իմ անձս կը նորոգէ :
4. Ո՛չ նեղուծիւնք՝ ոչ հարածանք
Զիս քու սերկդ կրնան զատել,
Եւ ոչ ալ կեանքն ու ոչ ալ մահ
Զիս քու անձէդ կրնան բաժնել :
5. Քու սիրդ ես պիտի պատմեմ
Մինչև իմ շունչս վերջիս հառնի,
Օրհնեալ Փրկիչ իմին հոգիս
Քու զիւրկդ ա՛քայ ժ լծող հապարտի :







1857

3036

ՀՀ Ազգային գրադարան



NL0030121

2949